ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«23» հունվարի 2019թ.
թիվ 02-Ո-19-001/11 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան _____

SIL INSURANCE

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ (ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ) ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱՋՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	02.11.2018	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Ս. Գրիգորյան	Որակի պատասխանատու	07.12.2018	
	Ա. Մեջլումյան	Իրավաբանական բաժնի պետ	14.12.2018	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	21.12.2018	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4
3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 9
4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 9
5 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/ՎԿԱՅԱԳԻՐ 10
6 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
7 ԾՐԱԳԻՐ I. ՍՏԱՆԴԱՐՏ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԷՎԱԿՈՒԱՑԻԱԻ ԵՎ ՌԵՊԱՏՐԻԱՑԻԱՅԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ 15
8 ՍՏԱՆԴԱՐՏ ԾՐԱԳՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ... 18
9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 25
10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 26
11 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 28
12 ԾՐԱԳԻՐ II. ԿՈՄՖՈՐՏ 29
13 ԾՐԱԳԻՐ III. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ 56
14 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 57
15 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 61

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Աջակցության (արտասահման մեկնողների) կամավոր ապահովագրության պայմանները» նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև յուրաքանչյուր ծածկույթի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում՝ կողմերի գործողությունները:

1.2 Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 Ընկերությունն իրականացնում է աջակցության (արտասահման մեկնողների) ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ոչ կյանքի ապահովագրության 18-րդ դասով, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:

1.4 Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին ծանոթացնել Պայմաններին, տալ Պայմանների մեկ օրինակ և այդ մասին նշում կատարել Պայմանագրում/Վկայագրում: Պայմանագրի/Վկայագրի և Պայմանների միջև հակասությունների դեպքում գործում են Պայմանագրով/Վկայագրով սահմանված դրույթները:

1.5 Պայմաններով ապահովագրության տարածք համարվում է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված ցանկացած երկիր, բացառությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքների:

1.6 Պայմանները կցվում են Պայմանագրին/Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը, և պարտադիր են Ապահովագրողի ու Ապահովադրի համար:

1.7 Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001:2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:

1.8 Պայմանները ուժի մեջ մտնում է 2019թ. օգոստոսի 1-ից: Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:

1.9 Սույն ապահովագրությունը գործում է միայն Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս ճանապարհորդության մեջ գտնվող անձանց համար:

1.10 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական վեբ կայքում (www.silinsurance.am):

2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ և հասկացողություններ.

- *Ընկերություն -* «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:
- *Պայմաններ -* ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Ճանապարհորդության (աջակցության) կամավոր ապահովագրության պայմաններ»:
- *Ընկերության խորհուրդ կամ Խորհուրդ –* Ընկերության կանոնադրության համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին:
- *Ընկերության գործադիր տնօրեն կամ Գործադիր տնօրեն –* Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:
- *Որակի կառավարման համակարգ* – Որակի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- *Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ –* Տեղեկատվական հոսքերի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
- *Որակի պատասխանատու* - Ընկերության աշխատող կամ Ընկերության հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր ունեցող այլ ընկերության աշխատող, որը պատասխանատու է Որակի ապահովմանն ու կառավարմանը ներկայացվող պահանջների կատարման համար:
- *Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր) -* Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ Պայմաններում նախատեսված բացառությունների և չհատուցվող ծախսերի) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (Ապահովագրված անձին), իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրության պայմանագրում/վկայագրում հաշվարկված ապահովագրավճարը՝ դրանում նշված կարգով և ժամկետներում:

- *Ապահովագրող* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն, որն իրականացնում է ապահովագրական գործունեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:
- *Ապահովադիր* - օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, գործունակ ֆիզիկական անձ, որն Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր/Վկայագիր:
- *Ապահովագրված անձ* – Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Որպես Ապահովագրված անձ՝ կարող են հանդես գալ արտասահման ուղևորության մեկնող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց տարիքը Պայմանագրի կնքման պահին չի գերազանցում 70 տարեկանը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ տարիք նշված չէ: Որպես Ապահովագրված անձ չի կարող հանդես գալ այն պետության քաղաքացին, որի տարածքում կատարվում է ճանապարհորդությունը, ինչպես նաև այդ պետությունում մշտապես կամ առավելապես բնակվող և/կամ կենսական շահերի կենտրոն ունեցող անձը: Ապահովագրված անձը հանդիսանում է Շահառու, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- *Պայմանագրի/Վկայագրի կողմեր* – Ապահովագրողն ու Ապահովադիրը միասին:
- *Ապահովագրական ռիսկ*- Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:
- *Ապահովագրական հատուցում* – այսուհետ՝ Հատուցում, ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմանների և ապահովագրական փաթեթի համաձայն՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրված անձին ապահովագրական գումարի սահմաններում տրամադրված աջակցության ծառայությունների դիմաց Ընկերության կողմից Ապահովագրված անձին կամ բժշկական հաստատությանը կամ համապատասխան կազմակերպությանը կամ տուժողին վճարման ենթակա գումար:
- *Ապահովագրական գումար* - Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դրանով նախատեսված ապահովագրական պատահարների դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափը:

- *Ապահովագրական պատահար -* Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված Բացառությունների) առաջանում է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը:
- *Ապահովագրավճար -* Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:
- *Ոչ պայմանական չհատուցվող գումար -* Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
- *Աջակցող ընկերություն -* Ապահովագրված անձի այցելության երկրի օրենսդրության համաձայն գործող կազմակերպություններ, որոնք Ապահովագրողի հետ կնքել են բժշկական, բուժտրանսպորտային ծառայությունների, էվակուացիայի, ռեպատրիացիայի և այլ ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր:
- *Ապահովագրական փաթեթ –* ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի շրջանակներում Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի Հավելվածով սահմանված հատուցման ենթակա բժշկական և այլ ծառայությունների ցանկ:
- *Ապահովագրական ծածկույթ –* Ապահովագրական փաթեթի ներքո տրամադրվող ծառայությունների ցանկ:
- *Դեղատներ -* կազմակերպություններ, որոնք իրականացնում են դեղատնային գործունեություն, այն է՝ դրանց գործունեության երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան դեղերի և սահմանված այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև դրանց գործունեության երկրի օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում՝ դեղերի պատրաստում կամ առաքում:
- *Բժշկական ծառայություններ -* միջոցառումներ կամ միջոցառումների համախումբ՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանը, դրանց ախտորոշմանը և բուժմանը, որոնք ունեն առանձին ամփոփ նշանակություն և որոշակի արժեք:
- *Դժբախտ պատահար -* Ապահովագրված անձի կամքից անկախ, որևիցե հիվանդության կամ դրա բարդության և/կամ հետևանքի հետ կապ չունեցող կամ հիվանդության հետևանք չհանդիսացող հանկարծակի,

անկանխատեսելի, պատահական, անսպասելի, ոչ միտումնավոր, կարճաժամկետ (մինչև 24 ժամ տևողությամբ) տեղի ունեցած արտաքին ազդեցություն, իրադաձություն (դեպք), որի բնույթը, ժամանակը և տեղը կարող են միանշանակ սահմանվել, և որի հետևանքով ապահովագրված անձին պատճառվել է մարմնական վնասվածք կամ օրգանիզմի ֆունկցիաների այլ խանգարումներ և (կամ) մահ: Ընդ որում, դժբախտ պատահարը պետք է տեղի ունեցած լինի Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում և հաստատվի համապատասխան գրավոր ապացույցով (վերջնական փաստաթուղթ)՝ տրված համապատասխան իրավասու մարմնի (Ոստիկանություն և այլն) կողմից:

- *<u>Բուժհաստատություն -</u>* Ապահովագրված անձի այցելած երկրի օրենսդրությանը համապատասխանող բուժհաստատություն, որը ծառայություն է մատուցում բուժօգնության ծառայությունների մատուցման համապատասխան լիցենզիայի հիման վրա:
- *<u>Ռեպատրիացիա -</u>* սույն պայմաններով նախատեսված հանկարծակի հիվանդության (բացառությամբ՝ քրոնիկ հիվանդության սրացման կամ դրանց բարդացման հետևանքի) կամ դժբախտ պատահարի հետևանքով մահացած Ապահովագրված անձի աճյունի վերադարձ ՀՀ տարածք: Աճյունի վերադարձման ծառայությունը ներառում է փաստաթղթերի իրավաբանական ձևակերպման ու դիակի հերձման ծառայությունների համար կատարված ծախսերը, ինչպես նաև միջազգային փոխադրման համար անհրաժեշտ դագաղի ձեռքբերման համար կատարված և աճյունի փոխադրման հետ կապված տրանսպորտային ծախսերը (բացառությամբ հուղարկավորության ծախսերի): Ռեպատրիացիայի ծախսերը չեն հատուցվում, եթե Ապահովագրված անձի մահը ապահովագրական պատահարի հետևանք չէ: Մահվան պատճառի առաջացման փաստն ապացուցելու պարտականությունը կրում է հատուցման դիմում ներկայացնող անձը:
- *<u>Բժշկական էվակուացիա-</u>* բժշկա-տրանսպորտային ծառայություններ, որը ներառում է իր մեջ՝
  - ցանկացած փոխադրամիջոցով ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող պատահար տեղի ունենալու վայրից դեպի բուժհաստատություն ապահովագրված անձի տեղափոխությանն ուղղված միջոցառումների համալիր: Բժշկական էվակուացիան իրականացվում է Ապահովագրված անձի գտնվելու երկրում՝ վերջինիս առողջական վիճակին համապատասխան փոխադրամիջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բուժանձնակազմի ուղեկցությամբ,
  - առողջական վիճակի կայունացումից հետո կոմերցիոն կամ մասնագիտական տրանսպորտային միջոցով Ապահովագրված անձի

տեղափոխում իր բնակության երկիրը/վայրը, ինչը կարող է ներառել նաև բժշկի հսկողությամբ իրականացված տեղափոխումը:

- *Մարմնական վնասվածք -* կենդանի հյուսվածքների կառուցվածքի և օրգանների անատոմիական ամբողջականության խախտում, ինչը հանդիսացել է արտաքին միջավայրի ֆիզիկական և քիմիական գործոնների միապահ կամ կարճաժամկետ ազդեցության արդյունք, և որոնք պահանջում են հոսպիտալացում կամ բժիշկների կողմից իրականացվող բուժում:
- *Հանկարծակի հիվանդություն -* Ապահովագրված անձի այնպիսի առաջնային վիճակ կամ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած այնպիսի դեպք կամ իրադարձություն, որի ժամանակ նրա մոտ տեղի է ունենում ֆիզիոլոգիական ֆունկցիաների և որոշակի համակարգերի գործունեության խանգարում, որոնք չեն կարող կամայականորեն վերականգվնել ինքնակարգավորման միջոցով և պահանջում են անհապաղ (շտապ) բժշկական օգնություն: Հանկարծակի հիվանդություններին են հավասարեցվում նաև կյանքին սպառնացող և օբյեկտիվ հետազոտությունների հիման վրա հաստատված տարբեր քրոնիկ հիվանդությունների սրացումները կամ բարդացումները: Հանկարծակի հիվանդություններին են վերաբերում այնպիսի հիվանդությունները, որոնց բնորոշ է սուր, հանկարծակի սկիզբը Ապահովագրված անձի թվացող առողջ ֆոնի հիման վրա:
- *Մարդկային կյանքի սպառնալիք -* Մարմնական վնասվածք կամ հիվանդություն, որին հետևում է մահը՝ ոչ ժամանակին և/կամ ոչ պատշաճ ցուցաբերված բուժօգնության հետևանքով:
- *Հարազատ -* Ապահովագրված անձի հայր, մայր, զավակ, երեխա, ամուսին (պետական գրանցում ստացած ամուսնության հիման վրա), քույր կամ եղբայր:
- *Սուբրոգացիա (հետադարձ պահանջ) -* Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող՝ վնասը պատճառած անձի նկատմամբ Ապահովադրի/Ապահովագրված անձի պահանջի իրավունքի փոխանցումը Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է:
- *Տրասպորտային փոմս -* մեկ ուղղությամբ ինքնաթիռով՝ էկոնոմ կարգի տոմս կամ գնացքով՝ առաջին կարգի տոմս:

2.2 Հապավումներ.

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն:

- ՈԿՀ – ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:
- ՏԱԿՀ – ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերի ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված Պայմանագրում/Վկայագրում նշված պետության կամ պետությունների տարածքում գտնվելու ընթացքում բժշկական օգնություն ստանալու, ռեպատրիացիա կազմակերպելու և այլ ծառայությունների (ներառյալ՝ բժշկա-տրանսպորտային) կամ այլ անձանց վնաս պատճառելու հետ կապված Ապահովադրի/Ապահովագրված անձի կրած ծախսերի և վնասների հատուցման հետ, որոնք առաջացել են Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում:

4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

4.1 Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրում/Վկայագրում և Պայմաններում՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

4.2 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը:

4.3 Պայմանագրով/Վկայագրով և Պայմաններով կարող են նախատեսվել հատուցման առավելագույն սահմանաչափեր:

4.4 Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել ոչ պայմանական չհատուցվող գումար, որի կիրառման դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

4.5 Ոչ պայմանական չհատուցվող գումարը Պայմանագրում/Վկայագրում սահմանվում է դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:

4.6 Ապահովագրավճարի չափը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ համաձայն իր կողմից սահմանված սակագների:

4.7 Ապահովագրավճարը կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ՝ արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

4.8 Արտարժույթով սահմանված ապահովագրավճարը Ընկերությանը ՀՀ դրամով վճարելու դեպքում հիմք է ընդունվում վճարման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը:

4.9 Ապահովագրավճարը պետք է վճարվի միանվագ, Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագով/Վկայագրով:

4.10 Ապահովագրավճարը վճարվում է կանխիկ կամ Ապահովագրողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.11 Եթե ապահովագրավճարը Պայմանագրում/Վկայագրում նշված կարգով և ժամկետներում չի վճարվել, ապա Պայմանագիրը/Վկայագիրը Ապահովագրողի կողմից կարող է համարվել չեղյալ՝ առանց լրացուցիչ ծանուցման կամ համաձայնագրի:

5 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/ՎԿԱՅԱԳԻՐ

Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքումը և գործողության ժամկետները.

5.1 Պայմանագրի/Վկայագրի կնքման համար հիմք է ծառայում Ապահովագրողի կողմից տրամադրված և Ապահովադրի կողմից լրացրած դիմում-հարցաթերթիկը, կամ նրա բանավոր հայտը՝ հետևյալ տվյալներով՝

5.1.1 Ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովադրի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան ամսաթիվը, հաշվառման և մշտական բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, անձնագրային կամ նույնականացման քարտի տվյալները,

5.1.2 Իրավաբանական անձի դեպքում՝ Ապահովադրի անվանումը, պետական ռեգիստրի գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական և փաստացի գործունեության հասցեները (դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը և բանկային հաշվեհամարը,

5.1.3 Ապահովագրված անձի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան

ամսաթիվը, հաշվառման և մշտական բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, անձնագրային տվյալները,

5.1.4 ճանապարհորդության մեջ գտնվելու ծրագրավորված ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը,

5.1.5 այն երկրները, որոնց տարածքում լինելու է Ապահովագրված անձը և որոնց տարածքում գործելու է Պայմանագիրը/Վկայագիրը դրա գործողության ընթացքում,

5.1.6 ուղևորության նպատակը,

5.1.7 մասնագիտությունը և ճանապարհորդության ընթացքում իրականացվելիք գործունեության բնույթը, եթե ուղևորության նպատակը աշխատանքն է,

5.1.8 առկա հիվանդությունները կամ հիվանդագին վիճակները,

5.1.9 Ապահովագրության ծրագիրը:

5.2 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով, երեք օրինակից, անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից, որոնք ստորագրում են Ապահովագրողը և Ապահովադիրը: Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասն են կազմում Պայմանները:

5.3 Պայմանագրին/Վկայագրին կից կարող են թողարկվել հավելվածներ, որոնք հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

5.4 Պայմանագրի/Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կամ Ապահովագրված անձի դիմումով 3 օրվա ընթացքում վերջինիս կտրամադրի Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը:

5.5 Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը պարտավոր են Ապահովագրողի պահանջով գրավոր ներկայացնել իրենց հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ռիսկի գնահատման համար նշանակալից ազդեցություն ունենալ, և որոնց հիման վրա Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրավճարի վերահաշվարկ՝ համեմատաբար բարձր գործակցով:

5.6 Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը պարտավոր են Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրենց հայտնի ապահովագրական ռիսկերի բոլոր փոփոխությունների մասին, իսկ չտեղեկացնելու դեպքում՝ նրանք են կրում դրանից բխող բոլոր բացասական հետևանքները:

5.7 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի համար, սակայն ոչ պակաս, քան 3 (երեք) օր ժամկետով, բայց ոչ ավել, քան 1 (մեկ) տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

5.8 Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրով/Վկայագրով նախատեսված են Ապահովագրված անձի բազմակի ուղևորություններ, ապա Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրված օրերի համար:

5.9 5.8 կետում նախատեսված դեպքերում՝ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված տարածք Ապահովագրված անձի կատարած յուրաքանչյուր ուղևորության ժամանակ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրված օրերի քանակն ինքնաշխատ կերպով պակասեցվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված տարածքում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված օրերի քանակի սպառմամբ:

5.10 Պայմանագիրը/Վկայագիրը չի գործում այն երկրներում, որտեղ Ապահովագրված անձն ունի գրանցում (հաշվառում) կամ հանդիսանում է տվյալ երկրի քաղաքացի կամ այդ երկրում բնակվում է մշտապես կամ առավելապես երկար ժամանակ:

5.11 Պայմանագիրը/Վկայագիրը չի գործում նաև ՀՀ և ԱՀ տարածքներում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ է նշված Պայմանագրում/Վկայագրում: Պայմանագրի/Վկայագրի շրջանակներում ՀՀ-ում և ԱՀ-ում գտնվելն օտարերկրյա քաղաքացի հանդիսացող Ապահովագրված անձանց համար ճանապարհորդություն չի հանդիսանում:

5.12 Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի շրջանակներում ապահովագրել նաև 70 տարեկանից բարձր անձանց՝ իր կողմից սահմանված հատուկ պայմաններով (այդ թվում՝ ապահովագրավճարի վերահաշվարկմամբ, որը լրացուցիչ սահմանվում է Ապահովագրողի կողմից հաշվարկված համեմատաբար բարձր գործակիցներով):

5.13 Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ վճարելու պահից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, իսկ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը սկսվում է Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի/Վկայագրի գործողության տարածքի սահմանն անցնելու պահից, սակայն Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետից ոչ շուտ, և գործում է մինչև Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ժամկետի ավարտը:

5.14 Պայմանագիրը/Վկայագիրը չի գործում այն պետությունների տարածքում, որտեղ՝

5.14.1 տեղի են ունենում ռազմական/պատերազմական գործողություններ կամ անցկացվում են ահաբեկչական-հակաահաբեկչական միջոցառումներ,

5.14.2 կիրառվում են ՄԱԿ-ի կամ այլ երկրի կողմից սահմանված տնտեսական և/կամ ռազմական պատժամիջոցներ,

5.14.3 Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և ճանաչվել են համաճարակների օջախներ:

5.15 Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է.

5.15.1 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի դեպքում,

5.15.2 Ապահովագրողի կողմից Ապահովադրի կամ Ապահովագրված անձի հանդեպ իր պարտականությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,

5.15.3 ապահովագրված օրերի քանակի սպառման դեպքում,

5.15.4 Պայմանագրով/Վկայագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5.16 **Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ լուծվում է՝**

5.16.1 Կողմերից մեկի գրավոր դիմումի հիման վրա.

5.16.1.1 եթե Ապահովագրված անձի կողմից նախատեսված ճանապարհորդությունը չի կայանում: Պայմանների սույն կետի իրագործման համար պարտադիր է, որ Ապահովադիրը.

- այդ մասին տեղեկացնի Ապահովագրողին Պայմանագրի/Վկայագրի գործողությունը սկսելուց առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ,
- Ապահովագրողին հետ վերադարձնի Պայմանագրի/Վկայագրի բնօրինակները,
- Ապահովագրողին ներկայացնի արտերկիր չմեկնելու գրավոր հիմքերը:

  Սույն ենթակետի պայմանների չկատարման դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

5.16.1.2 ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5.16.2 Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

5.17 Մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ

դադարեցման դեպքում վճարված ապահովագրավճարը վերադարձվում է Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրավճարի 85% - ի չափով:

5.18 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը սկսվելուց հետո Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ:

5.19 Պայմանագիրը/Վկայագիրը Ապահովադրի պահանջով վաղաժամկետ լուծելու դեպքում, երբ Ապահովադրի պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս, այդ խախտման փաստի ապացուցված լինելու դեպքում, Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարն ամբողջությամբ:

6 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Պայմաններն իր մեջ ներառում են հիմնական և լրացուցիչ ռիսկեր՝ ըստ հետևյալի՝

6.1 Ծրագիր I. Ստանդարտ (հիմնական ռիսկեր)

6.1.1 Բժշկական ծախսերի հատուցում.

6.1.2 Բժշկական էվակուացիայի ծախսերի հատուցում,

6.1.3 Հետմահու ռեպատրիացիայի ծախսերի հատուցում

6.2 Ծրագիր II.Կոմֆորտ (լրացուցիչ ռիսկեր)՝

Սույն Ծրագիրը իր մեջ ներառում է Ստանդարտ Ծրագրի ծառայությունները, նաև հետևյալ լրացուցիչ ռիսկերը՝

6.2.1 Տրանսպորտային ծախսերի հատուցում.

6.2.2 Ճանապարհորդության մեջ գտնվող անձանց ուղեբեռի կորուստ.

6.2.3 Ապահովագրված անձի քաղաքացիական պատասխանատվություն.

6.2.4 Թռիչքի ուշացում.

6.2.5 ՈՒղևորության չկայացում կամ վաղաժամկետ ընդհատում.

6.2.6 Փաստաթղթերի կորուստ.

6.2.7 Իրավաբանական ծառայությունների ծախսերի հատուցում:

6.3 Ծրագիր III. Հատուկ ծրագիր

7 ԾՐԱԳԻՐ Ի. ՍՏԱՆԴԱՐՏ՝ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԷՎԱԿՈՒԱՑԻԱԻ ԵՎ ՌԵՊԱՏՐԻԱՑԻԱՅԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

7.1 Սույն Պայմաններով սահմանված սահմանափակումները / բացառությունները հաշվի առնելով՝ Ապահովագրական պատահար են հանդիսանում ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում և ապահովագրության տարածքում տեղի ունեցած Ապահովագրված անձի հանկարծակի հիվանդության առաջացումը, Ապահովագրված անձի կյանքին սպառնացող և քրոնիկ հիվանդության՝ օբյեկտիվ հետազոտությունների հիման վրա հաստատված սրացումը կամ բարդացումը կամ տեղի ունեցած դժբախտ պատահարը, որոնց կապակցությամբ Ապահովագրված անձը Պայմանագրով սահմանված կարգով բժշկական և/կամ շտապ (անհետաձգելի) օգնության համար դիմել է բժշկական հաստատություն և Ապահովագրողին և/կամ Աջակցող ընկերությանը:

7.2 Ապահովագրական պատահարի արդյունքում հատուցման ենթակա են անհետաձգելի բուժօգնության և/կամ բժշկատրանսպորտային օգնության ցուցաբերման հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են.

7.2.1 հանկարծակի հիվանդությունների արդյունքում,

7.2.2 դժբախտ պատահարի հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների արդյունքում,

7.2.3 սուր ատամնացավի արդյունքում, որն առաջացել է ատամի կակղանի սուր բորբոքումից (պուլպիտ) կամ դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքից,

7.2.4 Ապահովագրված անձի շտապ (անհետաձգելի) տեղափոխում կազմակերպելու արդյունքում, եթե Ապահովագրված անձի ինքնուրույն տեղաշարժվելու անհնարինության դեպքում կազմակերպվել է նրա շտապ (անհետաձգելի) տեղափոխումը դեպի՝

7.2.4.1 մոտակա բժշկական հաստատություն՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար,

7.2.4.2 Ապահովագրողի համաձայնությամբ՝ ՀՀ կամ Ապահովագրված անձի մշտական բնակության երկիր:

7.2.5 ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և ապահովագրության տարածքում հանկարծակի հիվանդության (բացառությամբ՝ քրոնիկ հիվանդության սրացման կամ դրանց բարդացման հետևանքի, այդ թվում՝ կյանքին վտանգ սպառնացող) կամ տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով մահացած

Ապահովագրված անձի մարմնի հայրենադարձության՝ ռեպատրացիայի արդյունքում:

7.3 Բժշկական ծախսերը ներառում են՝

7.3.1 Շտապ և անհետաձգելի բուժօգնության հետ կապված ծախսերը,

7.3.2 Բժշկական կենտրոնում գտնվելու և ստացիոնար բուժման (ստանդարտ տիպի հիվանդասենյակում), ներառյալ՝ վիրահատությունների, դիագնոստիկ հետազոտությունների, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապական և անշարժացնող միջոցների հետ կապված ծախսերը,

7.3.3 Ամբուլատոր բուժման, ներառյալ՝ բժշկական խորհրդատվությունների, դիագնոստիկ հետազոտությունների, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապական և անշարժացնող միջոցների հետ կապված ծախսերը,

7.3.4 ատամի կակղանի բորբոքման (պուլպիտի) արդյունքում սուր ատամնացավի առաջացման դեպքում և/կամ դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների դեպքում շտապ ատամնաբուժական օգնության համար կատարված ծախսը, սակայն Ապահովագրողի պատասխանատվության չափը Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում բոլոր այցերի համար չի կարող գերազանցել 200 (երկու հարյուր) եվրոյին համարժեք ՀՀ դրամը, որը հաշվարկվում է բուժօգնության վճարումը կատարելու օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

7.3.5 Եգիպտոսի Արաբական Հանրապետության տարածքում սույն ենթակետում թվարկված դեպքերի ի հայտ գալու դեպքում կիրառվում է ոչ պայմանական չհատուցվող գումար 50 (հիսուն) Եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով յուրաքանչյուր և ամեն պատահարի/հայցի դեպքում՝ տոնզիլիտների, օտիտների, ալիմենտար ՍԱՏ-ի խանգարումների, վերին շնչուղիների հիվանդությունների, մրսածության և դրանցից բխող բարդությունների հետ կապված բժշկական ծախսերի նկատմամբ:

7.4 Ապահովագրողի կողմից հատուցումները վճարվում են այնքանով, որքանով մատուցված բժշկական ծառայությունները համապատասխանում են Ապահովագրված անձի կողմից ներկայացված գանգատներին, ախտանիշներին կամ ախտորոշմանը, անհրաժեշտ և ցուցված են տվյալ տեսակի հիվանդության, վնասվածքի կամ բժշկական միջամտության համար, ընդ որում՝ տվյալ ծառայությունները չպետք է իրականացվեն բացառապես

Ապահովագրված անձի, բժշկի կամ բժշկական օգնություն իրականացնող անձի հարմարավետությունից ելնելով:

7.5 Բժշկական ծառայությունների համար սահմանված վճարումները պետք է լինեն ողջամիտ և համապատասխանեն նման դեպքերի համար տվյալ տարածաշրջանում ընդունված վճարների չափին:

7.6 **Բժշկատրանսպորտային ծախսերը ներառում են՝**

7.6.1 Պատահարի վայրից դեպի ամենամոտ գտնվող բժշկական հաստատություն տեղափոխման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ճանապարհորդության երկրի տարածքում այլ բժշկական հաստատություն տեղափոխման հետ կապված ծախսերը, որոնք կատարվել են բուժող բժշկի հանձնարարականով և գրավոր ձևով հաստատվել են Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից: Սույն կետում նշված պահանջների խախտման դեպքում Ապահովագրողը կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

7.6.2 Ճանապարհորդության վայրից մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայրը՝ համապատասխան տրանսպորտային միջոցով, բժշկական էվակուացիայի իրականացման հետ կապված ծախսերը միայն այն դեպքում, երբ տվյալ երկրում հնարավոր չէ մատուցել բժշկական օգնություն, ինչը հաստատվում է համապատասխան բժշկական փաստաթղթով, և դրա անհրաժեշտությունը գրավոր ձևով հաստատվել է Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից: Բժշկական էվակուացիայի հետ կապված ծախսերը հատուցվում են Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

7.6.3 Ապահովագրված անձի՝ մինչև ՀՀ կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ մշտական բնակության վայր ճանապարհածախսը՝ մեկ ուղղությամբ հետևյալ եղանակներով՝ ինքնաթիռով՝ էկոնոմ կարգով, կամ գնացքով՝ առաջին կարգով: Նշված ծախսերը հատուցվում են այն դեպքում, երբ Ապահովագրված անձի մեկնումը տեղի չի ունեցել ժամանակին՝ Ապահովագրված անձի մոտ առկա ճանապարհային փաստաթղթերում նշված օրը, Ապահովագրված անձի ստացիոնար բուժման անհրաժեշտությանը հանգեցրած ապահովագրական պատահարի տեղի ունենալու պատճառով կամ ճանապարհորդությունը շարունակելու հակացուցման դեպքում: Ապահովագրված անձը և/կամ նրա հետ ճանապարհորդող անձը պարտավոր է անել իրենից կախված ամեն ինչ, որպեսզի

վերադարձնի/հանձնի օգտագործած ճանապարհային փաստաթղթերը և ստանա հատուցում դրանց արժեքի գծով:

7.6.4 Հետմահու ռեպատրացիայի ծախսերը, որոնք ներառում են մինչև 70 (յոթանասուն) տարեկան Ապահովագրված անձի աճյունի՝ ՀՀ կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ Ապահովագրված անձի մշտական բնակության վայր հայրենադարձության ծախսերը: Հայրենադարձությունը կազմակերպվում է Աջակցող ընկերության կողմից կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ այլ եղանակով: Մահացած Ապահովագրված անձի ընտանիքի անդամների հետ գրավոր համաձայնեցմամբ աճյունի հայրենադարձությունը կարող է փոխարինվել ապահովագրության տարածքում դիակիզումով և մոխիրով աճյունասափորը ՀՀ կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ Ապահովագրված անձի մշտական բնակության երկիր տեղափոխելով:

7.7 Ապահովագրված անձի հուղարկավորության հետ կապված ծախսերը հատուցման ենթակա չեն:

7.8 Ապահովագրողի կողմից հատուցումները վճարվում են այնքանով, որքանով մատուցված բժշկա-տրանսպորտային ծառայությունները համապատասխանում են Ապահովագրված անձի առողջության վիճակին, ախտանիշներին կամ ախտորոշմանը, անհրաժեշտ և ցուցված են տվյալ տեսակի հիվանդության, վնասվածքի կամ առողջական վիճակի համար, ընդ որում՝ տվյալ ծառայությունները չպետք է իրականացվեն բացառապես Ապահովագրված անձի, բժշկի կամ բժշկական օգնություն իրականացնող անձի հարմարավետությունից ելնելով, և նշված դեպքերի համար սահմանված վճարումները պետք է լինեն ողջամիտ և համապատասխանեն նման դեպքերի համար տվյալ տարածաշրջանում ընդունված վճարների չափին:

8 ՍՏԱՆԴԱՐՏ ԾՐԱԳՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Պայմանագրով/Վկայագրով և Պայմաններով նախատեսված Ապահովագրված անձին ցուցաբերված ցանկացած տեսակի ծառայությունների համար կատարված ծախսերը հատուցման ենթակա չեն հետևյալ դեպքերում.

8.1.1 եթե Ապահովագրված անձը չի տեղեկացրել Աջակցող ընկերությանը և/կամ Ապահովագրողին պատահարի, նախաձեռնած

գործողությունների և իր կողմից անձամբ կրած ծախսերի մասին՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետներում և կարգով,

8.1.2 եթե տեղի է ունեցել ցանկացած էվակուացում, բժշկական տեղափոխում կամ հայրենադարձում/ռեպատրիացիա, որը կազմակերպված չի եղել Աջակցող ընկերության կողմից կամ կատարվել է առանց Աջակցող ընկերության կամ Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցման,

8.1.3 Ապահովագրված անձի՝ պլանային բուժման/բուժօգնություն ստանալու նպատակով բժշկական հաստատություն այցելելու դեպքում,

8.1.4 եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ցանկացած տեսակի վճարովի ծառայություն մատուցելու կամ աշխատանքային պարտականությունները կատարելու կամ հասարակական բնույթի գործունեություն իրականացնելու ընթացքում,

8.1.5 եթե Ապահովագրված անձը դժբախտ պատահարի հետևանքով մարմնական վնասվածքներ ստանալիս եղել է ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ նյութերի և ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցների ազդեցության ներքո,

8.1.6 եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից հակաօրինական գործողություններ կատարելու հետևանքով,

8.1.7 եթե Ապահովագրված անձը չի պահպանել վարակիչ հիվանդությունների պրոֆիլակտիկայի միջազգային պահանջները,

8.1.8 եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների, կարանտինի պատճառով,

8.1.9 եթե Ապահովագրված անձին էվակուացրել են այնպիսի իրավիճակում, երբ հիվանդությունները կամ վնասվածքները չնչին են եղել, դրանք կարող էին ենթարկվել տեղական բուժման և չէին խոչնդոտում Ապահովագրված անձի ճանապարհորդության շարունակմանը,

8.1.10 եթե ծախսերը կապված են հետմահու ռեպատրիացիայի հետ, երբ Ապահովագրված անձի տարիքը բարձր է 70 (յոթանասուն) տարեկանից,

8.1.11 եթե ապահովագրական պատահարը կապված է զարգացման բնածին արատների և/կամ անոմալիաների հետ կամ տեղի է ունեցել դրանց պատճառով,

8.1.12 եթե ծախսերը կապված են այնպիսի հիվանդությունների հետ, որոնք վերջին վեց ամիսների ընթացքում՝ մինչև ապահովագրության ժամկետի սկսվելը, բուժում կամ ատամնաբուժական օգնություն են պահանջել: Նշվածը չի գործում անհետաձգելի բուժօգնության դեպքում: Եթե ծախսերը կապված են բուժման կուրսի հետ, որը սկսվել է մինչև

ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և շարունակվել է Պայմանագրի/Վկայագրի ժամկետի գործողության ընթացքում, կամ եթե տվյալ ճանապարհորդությունը նախաձեռնվել է՝ հաշվի չառնելով ճանապարհորդության համար ցանկացած, այդ թվում՝ բժշկի հակացուցումները,

8.1.13 եթե ծախսերը կապված են ատամնաբուժական օգնության տրամադրման հետ, բացառությամբ շտապ ատամնաբուժական օգնության հետ կապված ծախսերի, և եթե ատամի վնասվածքը դժբախտ պատահարի հետևանք չէ:

8.1.14 Ապահովագրված անձի կողմից ապահովագրական պատահարի հետ կապված բժշկին դիմելու և նրանից ստացած ցուցումների ու նշանակումների կատարումից կամավոր հրաժարվելու դեպքում,

8.1.15 եթե հիվանդությունները, առողջության խանգարումները կամ դժբախտ պատահարները, որոնք չեն պահանջում շտապ (անհետաձգելի) բժշկական օգնություն, չեն խոչընդոտում ուղևորության շարունակությանը և Ապահովադրի (Ապահովագրված անձի) մշտական բնակության վայրից դուրս գտնվելուն,

8.1.16 Ապահովագրված անձի կողմից ինքն իրեն դիտավորյալ վտանգի ենթարկելու, անդամախեղության, ինքնասպանության հետևանքով առաջացած մահվան կամ ինքնասպանության փորձի հետևանքով առաջացած վնասվածքի կամ հիվանդության դեպքերում,

8.1.17 քրոնիկ հիվանդությունների հետ կապված ծախսերը, բացառությամբ՝ դրանց կյանքին սպառնացող սրացումների կամ բարդացումների,

8.1.18 դիագնոստիկ հետազոտության հետ կապված ծախսերը (այդ թվում նաև խորհրդատվությունը և լաբորատոր հետազոտությունները) առանց հաջորդող բուժման,

8.1.19 նյարդային, հոգեկան հիվանդությունների կանխման և բուժման ծախսերը,

8.1.20 անգիոգրաֆիայի, ինչպես նաև սրտանոթային վիրաբուժության հետ կապված ծախսերը, այդ թվում՝ կորոնար անոթների ստենտավորման և շունտավորման, նույնիսկ եթե դրանց անցկացման համար առկա են բժշկական ցուցումներ,

8.1.21 օնկոլոգիական հիվանդությունների ախտորոշման և բուժման, դրանց բարդացումների և հետևանքների հետ կապված ցանկացած բժշկական ծառայություններ, գործողություններ և/կամ միջամտություններ՝ անկախ բարդության աստիճանից, բարորակ նորագոյացությունների, այդ թվում՝ հեմոբլաստոզների, էնդոմետրիոզի հետազոտության և բուժման,

դրանց բարդացումների և հետևանքների հետ կապված ցանկացած ծախս,

8.1.22 արևային այրվածքների, արևային ալերգիայի և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության հետևանքով մաշկի ախտահարումներ, ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության հետևանքով առաջացած արևահարության ախտորոշման և բուժման հետ կապված ծախսեր՝ անկախ բարդության աստիճանից,

8.1.23 օնիխոկրիպտոզի (ներաճած եղունգ) և դրանից բխող բարդությունների հետ կապված ծախսեր,

8.1.24 եթե կատարված ծախսերը կապված են հեպատիտ C վիրուսի, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ՁԻԱՀ, ՄԻԱՎ վարակման և/ կամ ցանկացած այլ համանման համախտանիշի/հիվանդության հետ կապված ցանկացած իրադարձությունների, վիճակների և հանգամանքների հետ՝ անկախ հիվանդության աղբյուրից, բնույթից և դրանից բխող այլ բարդություններից

8.1.25 հղիության արհեստական ընդհատման ծախսերը, բացի այն դեպքերից, երբ վիրահատությունն իրականացվում է ապահովագրված անձի կյանքը փրկելու նպատակով,

8.1.26 պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության, տրանսպլանտոլոգիական (օրգանների փոխպատվաստում), ցանկացած տեսակի պրոթեզավորման և/կամ էնդոպրոթեզավորման, ներառյալ՝ ատամնաբուժական և ակնաբուժական պրոթեզավորման հետ կապված ծախսերը,

8.1.27 պրոթեզների և էնդոպրոթեզների ձեռք բերման ծախսերը,

8.1.28 ապաքինման, վերականգնողական բուժման և ֆիզիոթերապիայի հետ կապված ծախսերը,

8.1.29 ոչ ավանդական մեթոդներով բուժման ծախսերը,

8.1.30 հղիությունը կամ ծննդաբերությունը՝ հղիության բարդացումների վերացումը, հղիության ընդհատումը, ծննդի վարումը և դրանց բարդացումը, հղիության հետևանքով քրոնիկ հիվանդությունների սրացման բուժումը իրականացնելու համար կատարված ծախսերը, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական օգնությունն իրականացվում է կյանքի ցուցումով,

8.1.31 հղիության կամ ծննդաբերության ընթացքում, Ապահովագրված անձի խորհրդատվական–ախտորոշիչ զննման անցկացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ մոր և/կամ երեխայի կյանքին վտանգ է սպառնում,

8.1.32 եթե կատարված ծախսերը կապված են կոսմետիկ և պլաստիկ վիրաբուժության կիրառում պահանջող հիվանդությունների և/կամ վիճակների հետ, եթե պլաստիկ վիրահատությունները չեն իրականացվում կյանքի ցուցումով և/կամ չեն հանդիսանում Ապահովագրված անձի սեփական օրգանները պահպանելու համար անհրաժեշտ վիրահատություններ,

8.1.33 բուժող բժշկի նշանակումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ինքնաբուժության և/կամ նշված բժշկի կողմից չնշանակված դեղամիջոցներ օգտագործելու հետևանքով առաջացած հիվանդությունների կամ առողջության խանգարումների բուժման հետ կապված ծախսերը,

8.1.34 լրացուցիչ հարմարությունների ստացման գծով ծախսերը, մասնավորապես՝ ոչ առաջին անհրաժեշտության պայմանների գծով ծախսերը,

8.1.35 ցանկացած կանխարգելիչ հետազոտությունների, ընդհանուր բժշկական զննումների, պատվաստումների հետ կապված ծախսերը, բացառությամբ ապահովագրական պատահարի դեպքում վարակման ուղղակի վտանգի առկայության դեպքում պատվաստումների,

8.1.36 այցելության երկրում բուժող բժշկի կողմից չնշանակված բժշկական դեղամիջոցների և ցանկացած դեղորայքի ծախսերը,

8.1.37 օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ծախսերը,

8.1.38 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո առաջացած ծախսերը,

8.1.39 բուժման ենթակա և Ապահովագրված անձի ուղևորությունը շարունակելուն չխոչընդոտող հիվանդության կամ վնասվածքի պատճառով էվակուացիայի գծով ծախսերը,

8.1.40 բժշկական գործունեություն իրականացնելու լիցենզիա չունեցող հաստատությունների կողմից ծառայությունների մատուցման գծով ծախսերը,

8.1.41 այն ծախսերը, որոնք կարող են հատուցվել այլ աղբյուրներից, այդ թվում՝ այլ ապահովագրական ընկերությունների և կամ այլ Պայմանագրերի հիման վրա:

8.2 **Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց**, եթե ապահովագրական պատահարն առաջացել է որպես հետևանք՝

8.2.1 միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության,

8.2.2 ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի, զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների,

8.2.3 քաղաքացիական պատերազմի, խռովությունների, ժողովրդական հուզումների, ռազմական գործողությունների և դրանց հետևանքների, գործադուլների, հեղափոխությունների, ապստամբությունների, քաղաքացիական հուզումների, զանգվածային անկարգությունների, ահաբեկչական ակտերի և դրանց հետևանքների, բնական աղետների, միջուկային պայթյունի, ճառագայթման ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ցանկացած տեսակի արտակարգ իրավիճակների (աղետներ և այլն) և անհաղթահարելի ուժի այլ հանգամանքների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

8.2.4 Ապահովագրված անձի՝ ռազմական ուժերում կամ կազմավորումներում ակտիվ ծառայության, վտանգավոր և/կամ էքստրեմալ սպորտաձևերով զբաղվելու, այդ թվում՝ լեռնային տուրիզմ (ալպինիզմ), վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, Լեռնային հեծանիվ մաունթինբայկ, հոլովակասպորտ, ժայռամագլցում, սպելեոլոգիա, սպորտային տուրիզմ, ձմեռային լող, բեյսջամփինգ,

8.2.5 Ապահովագրված անձի՝ ձիարշավներում, մրցարշավներում, ցանկացած սպորտային մրցումներում մասնակցության, մասնագիտական պարապմունքներ իրականացնելու, պրոֆեսիոնալ կամ սիրողական սպորտով զբաղվելու, մարզումներին ու սպորտային միջոցառումներին մասնակցելու, ժամանցային նպատակով սպորտով զբաղվելու և ցուցադրումների մասնակցելու, ինչպես նաև հանգիստն ակտիվ անցկացնելու:

Ապահովագրական պատահար են համարվում այն դեպքերը, երբ Ապահովագրողը Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու պահին գրավոր տեղեկացվել է Ապահովադրից, որ Ապահովագրված անձը ուղևորության ընթացքում զբաղվելու է Պայմանների 8.2.4 և/կամ 8.2.5 կետերով նախատեսված միջոցառումներով, և ապահովագրավճարը հաշվարկելիս օգտագործվել են Ապահովագրավճարի չափը համապատասխան բարձրացնող գործակիցներ:

8.3 Ապահովագրական պատահար չեն հանդիսանում նաև այն իրադարձությունները, որոնք առաջացել են հետևյալ գործողությունների արդյունքում, եթե Վկայագրով/Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ.

8.3.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ սեփական կյանքը և առողջությունը վերջինիս սովորական կենսագործունեության համեմատ չհիմնավորված/բարձր ռիսկի ենթարկելու գծով

միտումնավոր փորձը՝ բացառությամբ այլ մարդու կյանքը փրկելու դեպքերի,

8.3.2 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից բժշկական հակացուցումների առկայության դեպքում կամ բուժում ստանալու նպատակով ճանապարհորդություն իրականացնելը: Ընդ որում՝ Ապահովագրողը չի հատուցում բուժման գծով ծախսերը, որոնք հանդիսանում են ճանապարհորդության նպատակ, ինչպես նաև այդ բուժման հետ կապված Ապահովադրի (Ապահովագրված անձի) առողջության վիճակի վատթարացման կամ մահվան հետևանքով առաջացած ծախսերը,

8.3.3 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից տրանսպորտային միջոցի կառավարումը՝ տրանսպորտային միջոցը վարելու իրավունքի բացակայության դեպքում,

8.3.4 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից տրանսպորտային միջոցի կառավարումն այլ անձին փոխանցելը, ով չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք, կամ զրկված է այդ իրավունքից, կամ ով գտնվում է ոչ սթափ վիճակում և/կամ թույլ է տվել ճանապարհատրանսպորտային պատահար,

8.3.5 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից դիտավորությամբ թույլ տրված գործողություններ՝ ուղղված ապահովագրական պատահար տեղի ունենալուն,

8.3.6 Ապահովագրված անձի կողմից իրականացված թռիչքը ցանկացած տեսակի թռչող սարքով, դրա կառավարումը՝ բացառությամբ մասնագետ–օդաչուի կողմից կառավարվող քաղաքացիական ավիացիայի ինքնաթիռով հասարակ կամ չարտերային չվերթով որպես ուղևոր թռչելու դեպքերի,

8.3.7 Ապահովագրված անձի կողմից բարձր վտանգի հետ կապված գործունեության իրականացումը, այդ թվում՝ որպես մասնագիտական գործունեություն,

8.3.8 Ապահովագրված անձի ծառայությունը ցանկացած երկրի զինված ուժերում և/կամ ցանկացած կազմավորումներում,

8.3.9 Ապահովագրված անձի կողմից կյանքին և առողջությանը վնաս պատճառելու վտանգի հետ կապված ցանկացած աշխատանք կամ գործողություն կատարելը,

8.3.10 Ապահովագրված անձի գործատուի մեղավորությամբ ապահովագրական պատահար տեղի ունենալը,

8.3.11 Եթե Ապահովագրված անձին վնասը պատճառվել է հյուպատոսական ծառայությունների, փոխադրող ընկերությունների,

տուրօպերատորների/տուրիստական գործակալությունների, անմիջապես Ապահովագրված անձի և ուղևորության կազմակերպման ու անցկացման հետ կապ ունեցող այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թույլ տրված սխալների արդյունքում:

8.4 Ապահովագրական հատուցում չի վճարվում այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ստանում է վնասի հատուցում այլ անձանցից, այդ թվում՝ վնաս պատճառող անձից:

9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) և/կամ Ապահովադիրը պարտավոր են անհապաղ հայտնել պատահարի մասին Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարներից որևէ մեկով՝ բժշկական օգնության կամ բժշկա-տրանսպորտային կամ տրանսպորտային ծառայություններից օգտվելու և դրանց հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով:

9.2 Դիմելով Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին՝ Ապահովադիրը/Ապահովագրված անձը (նրանց ներկայացուցիչը) պարտավոր են հայտնել հետևյալ տեղեկությունները՝

9.2.1 Ապահովագրված անձի անունը, ազգանունը, էլ. փոստի հասցեն,

9.2.2 ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համարը,

9.2.3 Պատահարի նկարագիրը (վայրը, ժամը, հանգամանքները),

9.2.4 Ապահովագրված անձի գտնվելու վայրը և հետադարձ կապի հեռախոսահամարը:

Բացի վերը նշվածից՝ Ապահովագրված անձը պարտավոր է ՝

9.2.5 բժշկական օգնությունը ստանալու նպատակով հետևել Աջակցող ընկերության և/կամ Ապահովագրողի ցուցումներին,

9.2.6 բժշկական օգնություն ցուցաբերողին (բժշկական կազմակերպությանը) ներկայացնել Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,

9.2.7 ցանկացած գործողություն համաձայնեցնել Աջակցող ընկերության և/կամ Ապահովագրողի հետ,

9.2.8 հետևել բժշկի նշանակումներին ու խորհուրդներին:

9.3 Պայմանների 9.1 - 9.2 կետերում նշված գործողությունների չկատարման դեպքում Ապահովադիրը/Ապահովագրված անձը պարտավոր է Ապահովագրողին տալ գրավոր բացատրություն Պայմանների պահանջների

խախտման վերաբերյալ և ներկայացնել Պայմանների 10.1. կետով սահմանված փաստաթղթերը:

9.4 Աջակցող ընկերությունը կամ Ապահովագրողը, ստանալով ապահովագրական պատահարի մասին տեղեկությունը, կազմակերպում են Ապահովագրված անձին անհրաժեշտ՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված համապատասխան բժշկական, բժշկատրանսպորտային և/կամ տրանսպորտային ծառայությունների մատուցում, որոնց համար Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը չեն վճարում: Ապահովագրողը պարտավոր է հատուցել Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կամ նրանց Հարազատի կողմից Աջակցող ընկերությանը կատարած զանգերի հետ կապված ծախսերը՝ վերջինիս կողմից զանգերը և զանգի համար վճարված գումարը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու դեպքում, սակայն ոչ ավել, քան 50 (հիսուն) ԱՄՆ դոլար յուրաքանչյուր պատահարի գծով:

9.5 Եթե Ապահովագրված անձին չի հաջողվել կապ հաստատել Աջակցող ընկերության հետ, որում բացակայում է Ապահովագրված անձի մեղքը, ապա Ապահովագրված անձն իրավունք ունի ստանալ բժշկական կամ այլ ծառայությունները՝ նախապես պարտադիր և անհապաղ տեղեկացնելով Ապահովագրողին կամ ինքնուրույն դիմել մոտակա բժշկական հաստատություն և ներկայացնել Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կամ ինքնուրույն վճարել մատուցված ծառայությունների դիմաց: Վերը նշված գործողությունները՝ Ապահովագրված անձի կողմից օբյեկտիվ պատճառներով կատարելու անհնարինության դեպքում դրանք կարող են կատարվել Ապահովագրված անձի շահերը ներկայացնող անձի կողմից:

9.6 Բժիշկը, ով նշանակվել է Աջակցող ընկերության կողմից, պետք է ունենա Ապահովագրված անձի մոտ ազատ ելումուտ անելու, ինչպես նաև հիվանդության պատմությունից օգտվելու հնարավորություն: Համապատասխան անձինք պարտավոր են ապահովել բժշկի՝ սույն կետով նախատեսված իրավունքի իրացումը:

9.7 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը և նրա շահերը ներկայացնող անձը պարտավոր են գործել Ապահովագրողի և/կամ սպասարկող (բժշկա-տրանսպորտային կամ իրավաբանական ծառայություններ մատուցող, բեռնափոխադրում իրականացնող և այլն) կամ Աջակցող ընկերության հրահանգների համաձայն:

10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10.1 Բժշկական ծախսերի ինքնուրույն վճարման դեպքում Ապահովագրված անձը կատարված ծախսերի դիմաց հատուցում ստանալու նպատակով ՀՀ տարածք վերադառնալուց հետո ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, իսկ հետմահու ռեպատրիացիայի դեպքում՝ Ապահովագրված անձի Հարազատը համապատասխան ծախսը կատարելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.

10.1.1 հատուցում ստանալու համար համապատասխան դիմում,

10.1.2 ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,

10.1.3 բժշկական փաստաթղթեր (Ապահովագրված անձի գանգատների, կատարված հետազոտությունների, ախտորոշման, բուժման, նշանակված դեղորայքի մասին լիարժեք տեղեկատվություն պարունակող ցանկացած փաստաթուղթ), մահվան առաջացման առաջնային պատճառի (հանկարծակի հիվանդության ախտորոշման կամ դժբախտ պատահարի) վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (ախտաբանաանատոմիական հերձման արդյունքները, պաթոլոգոանատոմիական հետազոտության արդյունքները, դատաբժշկական եզրակացությունը և այլն), Ապահովագրված անձի համար բուժող բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսը, որը ներառում է դեղորայքի արժեքները և դեղատան կնիքը (առկայության դեպքում),

10.1.4 Ապահովագրված անձին տրամադրված ծառայության համար, այդ թվում՝ հիվանդանոց տեղափոխելու կամ հետմահու ռեպատրիացիա կազմակերպելու նպատակով տրված փաստաթղթերը, բժշկական հաստատությունների կողմից տրված հաշիվ-ապրանքագրերը՝ բժշկական կազմակեպության կնիքով, որի մեջ նշված է Ապահովագրված անձի անունը, ազգանունը, բուժօգնության դիմելու ամսաթիվը, բժշկական եզրակացությունը, տրամադրված ծառայությունները՝ ըստ գների և բուժման տևողության:

10.1.5 Ապահովագրողի պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

10.2 Եթե Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերը կազմված են օտար լեզվով, ապա դրանց պետք է կցված լինի որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունները, իսկ Ապահովագրողի պահանջով՝ նաև նոտարական վավերացմամբ:

10.3 Ապահովագրված անձի (նրա շահերը ներկայացնող անձի) կամ հետմահու ռեպատրիացիայի դեպքում՝ Ապահովագրված անձի Հարազատի կողմից սույն բաժնում նշված պարտականությունների չկատարման, այդ թվում՝ փաստաթղթերի նշված փաթեթն ամբողջությամբ չներկայացնելու դեպքում

Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:

10.4 Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը թույլ չեն տալիս կայացնել ապահովագրական հատուցման մասին որոշում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել վերջնական որոշում ընդունելու համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն, ինքնուրույն պարզել տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության պատճառները և հանգամանքները:

10.5 Հատուկ հետաքննություն, զննումներ և փորձաքննություններ պահանջող, ինչպես նաև բժշկական հաստատություններից, դատական և/կամ այլ իրավասու մարմիններից լրացուցիչ տեղեկությունների ստացում պահանջող հանգամանքների առկայության դեպքում ապահովագրական հատուցման վճարումը կարող է կասեցվել մինչև հետաքննության ավարտը և/կամ նշված տեղեկությունների ստացումը, ինչի մասին Ապահովագրողն ուղարկում է դիմողին համապատասխան ծանուցում:

11 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Ապահովագրողն ապահովագրական գումարի սահմաններում կատարում է Ապահովագրված անձին մատուցած ծառայությունների գծով հաշիվների վճարում կամ հատուցում է Ապահովագրված անձի կամ Ապահովադրի կամ նրանց Հարազատի կողմից կատարված ծախսերը՝ այդ ծառայությունները ստանալու համար Ապահովագրված անձի կողմից ծառայությունների մատուցման համար վճարման փաստը հավաստող, ինչպես նաև Պայմանների 10-րդ բաժնում նշված փաստաթղթերի ներկայացման դեպքում:

11.2 Ապահովագրական հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է Պայմանագրում/Վկայագրում և Պայմաններով սահմանված սահմանաչափերով ու Ապահովագրված անձի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքին համապատասխան:

11.3 Ապահովագրված անձի կողմից ներկայացված փաստաթղթերում բժշկական ծառայությունների գծով գները յուրաքանչյուր ծառայության համար առանձին ներկայացված չլինելու դեպքում ապահովագրական պատահարի գծով Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերը փոխհատուցելու

նպատակով ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողը հիմնվում է հետևյալ տեղեկատվության աղբյուրներից որևիցե մեկի վրա՝

11.3.1 Ապահովագրված անձին ապահովագրական պատահարի գծով տվյալ ծառայությունը մատուցած բժշկական հաստատության կայքում այդ ծառայության գծով տեղադրված գները,

11.3.2 Ապահովագրական պատահարի գծով տվյալ ծառայության գնի վերաբերյալ Աջակցող ընկերության կողմից տրամադրված տեղեկատվությունը,

11.3.3 Ապահովագրողի կողմից նախկինում ապահովագրական հայտերը կարգավորելիս տվյալ ծառայության գծով կիրառված գները՝ հաշվի առնելով գնաճը:

11.4 Ապահովագրողը սույն Պայմանների համաձայն՝ ապահովագրական պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է որոշում կայացնել ապահովագրական հայցը մերժելու կամ բավարարելու մասին՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով Ապահովագրված անձին, Ապահովադրին և դիմումը ներկայացնող Հարազատին՝ ապահովագրական հատուցման հայցային դիմումում նշված փոստային կամ էլեկտրոնային փոստի հասցեին՝ թղթային կամ էլեկտրոնային նամակ ուղարկելու միջոցով:

11.5 Ապահովագրական հայցը բավարարելու մասին որոշման կայացման դեպքում Ապահովագրողը 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:

12 ԾՐԱԳԻՐ II. ԿՈՄՖՈՐՏ

Այս ռիսկերը կիրառվում են Ապահովադրի կողմից լրացուցիչ ապահովագրական վճարի վճարման և Պայմանագրում/Վկայագրում նշված լինելու դեպքում: Ընդ որում՝ Ապահովադրի ցանկությամբ, Վկայագրում կարող են նշվել մեկ, մի քանի կամ ստորև նշված բոլոր ռիսկերը:

12.1 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Տրանսպորտային ծախսերը հատուցվում են ստորև նշված դեպքերում.

12.1.1 Հարազատի այցը ապահովագրության տարածք արտակարգ իրավիճակի դեպքում

Եթե միայնակ ճանապարհորդող Ապահովագրված անձի առողջական վիճակը բուժող բժշկի կողմից գրավոր ձևով տրված կարծիքով կրիտիկական է, ապա Ապահովագրողը վճարում է Ապահովագրված անձի Հարազատի այցի համար երկկողմանի (մշտական բնակության վայրի հետադարձով)

էկոնոմ կարգի տոմսերի արժեքը: Ապահովագրված անձի Հարազատի՝ արտերկրում գտնվելու ծախսերն Ապահովագրողը չի հատուցում:

12.1.2 Վաղաժամկետ վերադարձ

Հարազատի հանկարծամահության դեպքում Ապահովագրողը երաշխավորում է Ապահովագրված անձի վաղաժամկետ վերադարձի կազմակերպումն իր մշտական բնակության երկիր և վճարում է այն դեպքում, երբ Ապահովագրված անձը նախապես վերադարձնում է վերադարձի չօգտագործված Տրանսպորտային տոմսը (կամ նրա արժեքը) Ապահովագրողին կամ Աջակցող ընկերության ներկայացուցչությանը:

12.1.3 Երեխաների էվակուացում

Եթե Ապահովագրված անձի հետ պատահած դժբախտ պատահարի կամ հանկարծակի հիվանդության և/կամ մահվան հետևանքով նրա հետ ճանապարհորդող անչափահաս երեխան կամ երեխաները մնացել են առանց խնամակալի, ապա՝

12.1.3.1 Ապահովագրողը երաշխավորում է նրանց՝ իրենց մշտական բնակության երկիր վաղաժամկետ վերադառնալու կազմակերպումն ու վճարումը՝ տրանսպորտային տոմսի արժեքի չափով: Անչափահաս երեխաների վերադառնալու կազմակերպումը և վճարումն իրականացնում է Աջակցող ընկերությունը՝ իր միջոցների հաշվին: Ծախսերի հատուցումը հայրենիքում իրականացնում է Ապահովագրողն այդ ծախսը կատարած անձին, եթե անչափահաս երեխաների վերադարձի կազմակերպումը և վճարումն իրականացնում է նրանց շահերը ներկայացնող անձը՝ Աջակցող ընկերությանը նախապես տեղեկացնելով:

12.2 ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂԵԲԵՌԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12.2.1 Ապահովագրության օբյեկտ.

12.2.1.1 Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված իրեն պատկանող ուղեբեռի տիրապետման և օգտագործման հետ: Ուղեբեռ ասելով՝ հասկացվում են բացառապես անձնական նպատակներով օգտագործման համար (նրան սեփականության իրավունքով պատկանող, չվարձակալած, չփոխառնված և այլն) նախատեսված Ապահովադրի (Ապահովագրված անձի) ուղևորության ընթացքում փոխադրվող անձնական իրերը (բացառությամբ ձեռքի ծանրոցները, որոնք տեղափոխվում են Ապահովագրված անձի

կողմից ինքնուրույն և գտնվում են ուղևորների համար նախատեսված տրանսպորտային միջոցի սրահում)՝ տրանսպորտային կազմակերպություն հանձնած ուղեբեռը, որը պատշաճ ձևակերպվել և հանձնվել է փոխադրողին՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի) մշտական բնակության վայրից ապահովագրության տարածք և հետ մշտական բնակության վայր, ինչպես նաև Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ ապահովագրության տարածքի մեջ մտնող երկրների (տարածքների) միջև երթևեկելիս:

12.2.1.2 Պայմանների 12.2.1.3 կետում նշված իրերը համարվում են ապահովագրված միայն այն դեպքում, երբ Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում, կամ Ապահովագրողի պահանջով դրանք նշված են Պայմանագրին/Վկայագրին կցվող հայտարարագրման ցուցակի մեջ:

12.2.1.3 Պայմանագրում/Վկայագրում հատուկ նշումի կամ հայտարարագրման ցուցակի առկայության դեպքում ապահովագրման ենթակա են հետևյալ իրերը՝ ցանկացած փաստաթուղթ (ներառյալ անձնագրեր, ճանապարհային փաստաթղթեր և այլն), ձեռագրեր, գծագրեր, գործնական փաստաթղթեր, ապակյա և բյուրեղապակյա իրեր, ոսպնյակներ և այլ փխրուն իրեր, մոտո, հեծանիվ և դրանց պահեստամասերը, ցանկացած սարքավորում՝ աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումներ, հաշվողական և ծրագրային համակարգեր, համակարգիչներ, տպագրող մեքենաներ և նրանց պատկանող ցանկացած այլ իրեր, ինչպես նաև դրանց պահեստամասերը: Պայմանագրում/Վկայագրում հատուկ նշումի կամ հայտարարագրման ցուցակի բացակայության դեպքում վերը նշված իրերը չեն համարվում ապահովագրված, և դրանց պատճառված վնասը և/կամ կորուստը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից:

12.2.1.4 Առանց հայտարարագրելու՝ ճանապարհորդության մեջ գտնվող անձանց ուղեբեռի ապահովագրության դեպքում, ապահովագրությունն իրականացվում է «առաջին ռիսկով ապահովագրության» պայմանով, այսինքն, եթե ապահովագրական գումարն ավելի փոքր է, քան ապահովագրական արժեքը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է փաստացի վնասի գումարի չափով,

սակայն ոչ ավելի, քան սահմանված հատուցման առավելագույն գումարը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

12.2.2 Ուղեբեռ, որն ապահովագրության ենթակա չէ.

12.2.2.1 Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողությունը տարածվում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) 12.2.1.1 կետում նշված ուղեբեռի վրա, բացառությամբ՝ ստորև նշված առարկաների, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ.

12.2.2.2 ՀՀ դրամով և արտարժույթով կանխիկ փող, արժեթղթեր, զեղչային և բանկային քարտեր,

12.2.2.3 թանկարժեք մետաղներից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից զարդեր, ինչպես նաև թանկարժեք մետաղների ձուլակտորներ,

12.2.2.4 առանց շրջանակի թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,

12.2.2.5 մորթուց պատրաստված իրեր (բնական և արհեստական մորթի),

12.2.2.6 հին, արժեքավոր ու յուրահատուկ իրեր, արվեստի գործեր ու հավաքածուի բաղկացուցիչ առարկաներ,

12.2.2.7 կենդանիներ, բույսեր և սերմեր,

12.2.2.8 հոգևոր մշակույթի իրեր,

12.2.2.9 սպորտային պարագաներ, որոնց ամբողջական ոչնչացումը կամ վնասվածքը տեղի է ունեցել սպորտով զբաղվելիս կամ սպորտային մրցույթների ժամանակ:

12.2.3 Ապահովագրական պատահար.

12.2.3.1 Ապահովագրական պատահար է համարվում գրավոր ձևով հաստատված և ուղևորության ժամանակ փոխադրումն իրականացնող փոխադրող կազմակերպությանը (այսուհետ՝ Փոխադրող) հանձնված ուղեբեռի ուշացումը, կորուստը, ամբողջական կամ մասնակի ոչնչացումը:

12.2.3.2 Ապահովագրողը հատուցում է նաև կորած իրերի որոնման, փորձաքննության, պահպանման և փոխադրման ծախսերը, ինչպես նաև վնասված ուղեբեռի վերանորոգման հետ կապված ծախսերը: Անուղղակի ծախսերը (հյուրանոցային կացության,

սննդի, տրանսպորտային ծախսեր և այլն) հատուցման ենթակա չեն:

12.2.3.3 Եթե Ապահովագրված անձն իր ուղեբեռի ուշացման, կորստի (ամբողջական կամ մասնակի) կամ ոչնչացման (ամբողջական կամ մասնակի) արդյունքում ստացել է հատուցում նաև Փոխադրողի կողմից, ապա Ապահովագրողը վճարում է սույն ծածկույթով նախատեսված և տվյալ փոխադրողի կողմից վճարված հատուցման դրական տարբերությունը:

12.2.3.4 Ավտոմեքենայից ուղեբեռի գողացման դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է այնպիսի փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք հաստատում են, որ.

12.2.3.4.1 գողությունը տեղի է ունեցել ժամը 06:00-22:00-ի սահմաններում,

12.2.3.4.2 գողացված իրերը գտնվել են վերահսկվող կայանավայրում կայանված ավտոմեքենայի փակված բեռնախցիկում: Այս դեպքում ապահովագրական ծածկույթը չի տարածվում մորթյա իրերի, զարդերի, թանկարժեք մետաղներից, թանկարժեք և կիսաթանկաժեք քարերից պատրաստված իրերի, փոխադրվող (շարժական) աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումների, հաշվողական և ծրագրային համակարգերի, տպագրող մեքենաների և նրանց պատկանող ցանկացած այլ իրերի վրա,

12.2.3.4.3 գողությունը կատարվել է երեք ժամից ոչ ավել կայանման ժամանակ:

12.2.4 Ապահովագրված անձի գործողություններն ապահովագրական պատահարի դեպքում

Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը՝

12.2.4.1 24 ժամվա ընթացքում պարտավոր է դիմել դեպքի վայրի իրավասու մարմիններին (հյուրանոցի ադմինիստրացիա, տրասնպորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական իրավապահ մարմիններ և այլն) այնպիսի փաստաթղթերի ստացման համար, որոնք արձանագրում են ուղեբեռի կորստի կամ վնասման կամ

ոչնչացման փաստը (օրինակ՝ Փոխադրողի ներկայացուցչի կողմից կազմված առևտրային ակտ): Նշված մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերը պետք է լինեն ստորագրված և կնքված, իսկ նման փաստաթղթերի կազմումից հրաժարվելը նշված մարմինների կողմից պետք է լինի ձևակերպված գրավոր տեսքով:

12.2.4.2 24 ժամվա ընթացքում ցանկացած հասանելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) պարտավոր է Ապահովագրողին կամ Պայմանագրում նշված Աջակցող ընկերությանը տեղեկացնել պատահարի մասին:

12.2.5 Ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.2.5.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

12.2.5.1.1 Պայմանագիրը/Վկայագիրը,

12.2.5.1.2 անձնագրի պատճենը,

12.2.5.1.3 արտասահմանյան անձնագրի պատճենը կամ ՀՀ պետական սահմանը հատելու մասին սահմանային հսկողության նշումներով այլ փաստաթուղթ (միայն օտար երկրների քաղաքացիների համար),

12.2.5.1.4 փոխադրողին ուղեբեռը փոխանցելու փաստը հաստատող փաստաթղթերի բնօրինակները (ուղեբեռի ստացական, պահպանմանը հանձնման ստացական և այլն),

12.2.5.1.5 համապատասխան թռիչքի տոմսը և նստեցման կտրոնը,

12.2.5.1.6 ուղեբեռի ուշացման, կորստի, ոչնչացման կամ մասնակի վնասման վերաբերյալ Փոխադրողի կողմից տրված փաստաթղթի բնօրինակը (կոմերցիոն ակտ և այլն)՝ ստորագրված և կնքված,

12.2.5.1.7 փոխադրողի կողմից հատուցում ստանալու դեպքում՝ այդ հատուցումը փաստող ֆինանսական փաստաթուղթը, իսկ այն մերժելու դեպքում՝ մերժման մասին գրավոր փաստաթղթի բնօրինակը,

12.2.5.1.8 ուղեբեռի կորստի դեպքում՝ կորած իրերի ցուցակը,

12.2.5.1.9 ուղեբեռի մասնակի ոչնչացման կամ վնասման դեպքում՝ տվյալ իրերը,

12.2.5.1.10 հայցային դիմումի պատճենը և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Փոխադրողին (պահպանման համար պատասխանատու կազմակերպությանը) հայց ներկայացնելու համար՝ տրված Փոխադրողի փոխադրման պայմաններով սահմանված հայցի ներկայացման առավելագույն ժամկետի ընթացքում,

12.2.5.1.11 չվերթի և/կամ ուղեբեռի ուշացումը հաստատող փաստաթղթի բնօրինակը՝ Փոխադրողի նշումով, ներառյալ՝ չվերթի համարը, վայրը, որտեղ տեղի է ունեցել ուշացումը և ուշացման ժամերի քանակը:

12.2.5.2 Եթե Ապահովագրված անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են օտար լեզվով, ապա դրանց պետք է կցված լինեն որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունները, իսկ Ապահովագրողի պահանջով՝ նաև նոտարական վավերացմամբ թարգմանությունները:

12.2.5.3 Ապահովագրողն իրավունք ունի ներկայացված փաստաթղթերը ստուգել՝ ապահովագրական պատահարի մասին տեղեկություններ ունեցող կազմակերպություններին հարցումներ կատարելու միջոցով: Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողի՝ ապահովագրական պատահարի հետ կապված հարցերին տալ գրավոր բացատրություններ:

12.2.6 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

12.2.6.1 Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝

12.2.6.1.1 Փոխադրողին չհանձնած ուղեբեռի (ձեռքի ուղեբեռի) կորուստը կամ ոչնչացումը,

12.2.6.1.2 ուղեբեռի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը նպաստող Ապահովագրված անձի դիտավորյալ գործողությունների կամ անգործության, իրերի տեղափոխման կանոնները չպահպանելու հետևանքով առաջացած վնասը,

12.2.6.1.3 իրավասու մարմինների կողմից տրված հանձնարարության հիման վրա ուղեբեռի բռնագրավումը կամ ոչնչացումը,

12.2.6.1.4 միջուկային պայթյունի, ռադիոակտիվ վարակման, ժողովրդական հուզումների, պատերազմի և այլ ռազմական գործողությունների, ահաբեկչական ակտերի հետևանքով առաջացած վնասը,

12.2.6.1.5 Ապահովագրված անձի մոտ գտնվող ձեռքի ծանրոցի, ինչպես նաև Փոխադրողին հանձնված այն ուղեբեռի վնասումը, ոչնչացումը կամ կորուստը, որոնք ցանկացած պատճառով համապատասխան ձևակերպում չեն ստացել,

12.2.6.1.6 ուղեբեռի վնասում, ոչնչացում կամ կորուստ, որի կազմում գտնվում էին պայթունավտանգ, թունավոր նյութեր,

12.2.6.1.7 ուղեբեռի առարկաների օգտակար հատկությունների վնասում, ոչնչացում կամ կորուստ՝ իրենց բնական հատկությունների պատճառով, ներառյալ մաշվածություն, ժանգ, բորբոս, գունազրկում և այլն,

12.2.6.1.8 միջատների և կրծողների կողմից ուղեբեռի վնասում, մանր մակերեսային վնասվածքներ, և ուղեբեռի առարկաների արտաքին տեսքի խաթարում (քերծվածքներ, մաշվածություններ և այլն), որոնք չեն բերում գույքի օգտակար հատկությունների կորստին կամ նվազեցմանը,

12.2.6.1.9 պահպանման և/կամ փոխադրման հատուկ պայմաններ պահանջող ուղեբեռի առարկաների վնասումը, ոչնչացումը կամ կորուստը՝ նշված պայմանները չպահպանելու հետևանքով,

12.2.6.1.10 ուղեբեռի փոխադրման և պահպանման հետ կապված՝ Ապահովագրված անձի սեփական

պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, այդ թվում՝ ուղեբեռի դիմաց վճարման, փաթեթավորման պայմանների և ուղեբեռը ժամանակին ստանալու գծով,

12.2.6.1.11 աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումների և համանման այլ առարկաների էլեկտրական կամ մեխանիկական անսարքությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջացել են հրդեհի կամ նման առարկաները փոխադրող տրանսպորտային միջոցի վթարի հետևանքով,

12.2.6.1.12 ճենապակյա, հախճապակյա, ապակյա իրերի, երաժշտական գործիքների և այլ փխրուն առարկաների կոտրում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք առաջացել են հրդեհի, գողության փորձի կամ նման առարկաները փոխադրող տրանսպորտային միջոցի վթարի հետևանքով,

12.2.6.1.13 ուղեբեռում տեղափոխվող թթուներով, ներկերով, աէրոզոլներով, դեղերով և ցանկացած հեղուկներով պատճառված վնաս, ինչպես նաև դրանց ազդեցության արդյունքում առաջացած վնասը,

12.2.6.1.14 մարզագույքի՝ դրա փոխադրման կամ պատասխանատու պահպանման ընթացքում կորուստը կամ վնասը,

12.2.6.1.15 գույքին (ուղեբեռին) պատճառված վնասը, ոչնչացումը կամ կորուստը, որոնք պատճառվել են անմիջապես ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող օդանավով կամ այլ օդային միջոցներով առաջացրած ճնշման ալիքներով,

12.2.6.1.16 ճառագայթման, ցանկացած մաքրման, ներկման, վերանորոգման կամ վերականգնման գործընթացով պատճառված վնասը, ոչնչացումը կամ կորուստը,

12.2.6.1.17 մթնոլորտային տեղումների հետևանքով (անձրև, ձյուն և այլն) պատճառված վնասը, ոչնչացումը կամ կորուստը:

12.2.6.1.18 այլ անձի միջոցով կամ փոստով ուղարկված ուղեբեռի վնասումը:

12.2.6.2 Ապահովագրողը չի իրականացնում ապահովագրական հատուցման վճարում, եթե ուղեբեռի կորստի, ոչնչացման կամ վնասման արդյունքում պատճառված վնասները լիովին հատուցվել են այլ ապահովագրական ընկերության կողմից, ինչպես նաև Փոխադրողի պատասխանատվության ապահովագրության պայմանագրով:

12.3 ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

12.3.1 Ապահովագրության օբյեկտ

Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի այն գույքային շահերը, որոնք չեն հակասում ճանապարհորդության երկրի օրենսդրությանը և կապված են Ապահովադրի կողմից այլ (երրորդ անձանց) անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասի հատուցման հետ:

12.3.2 Ապահովագրական պատահար

Սույն պայմաններով ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի մեղավորությամբ և ոչ դիտավորյալ գործողությունների հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասը, որը հասցվել է Պայմանագրով/Վկայագրով սահմանված տարածքում, և տվյալ տարածքի/երկրի օրենսդրության ուժով այդպիսի վնաս պատճառելու հանգամանքն առաջացնում է Ապահովագրողի՝ Պայմանագրով/Վկայագրով հատուցում վճարելու պարտավորություն:

Միևնույն պատճառից ծագած՝ հերթականությամբ կամ միաժամանակ ի հայտ եկած մի շարք իրադարձությունների ազդեցության արդյունքում, մի քանի անձանց վնասի պատճառումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար:

Այդպիսի իրադարձությունների արդյունքում ներկայացված վնասի հատուցման բոլոր պահանջները կհամարվեն ներկայացված այն պահին, երբ Ապահովագրված անձի նկատմամբ ներկայացվել է այդ պահանջներից առաջինը:

12.3.3 Ապահովագրական հատուցում

12.3.3.1 Ապահովագրողը պարտավոր է վճարել ապահովագրական հատուցում, եթե ապահովագրական պատահարը՝ կապված

Ապահովագրված անձի քաղաքացիական պատասխանատվության հետ, առաջացրել է.

12.3.3.1.1 երրորդ անձանց մահ, աշխատունակության կորուստ, մարմնական վնասվածք,

12.3.3.1.2 երրորդ անձանց պատկանող գույքի ոչնչացում՝ մասնակի կամ ամբողջական, կամ վնասվածք՝ մասնակի կամ ամբողջական (այսուհետ՝ գույքային վնաս):

12.3.3.2 Ապահովագրական ծածկույթը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք վրա են հասել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում և ապահովագրության տարածքում և/կամ դրա ուղղակի հետևանք են:

12.3.3.3 Ապահովագրողը հատուցում է նաև Ապահովագրված անձի կողմից կատարված այն ողջամիտ ծախսերը, որոնք իրականացվել են այլ անձանց կյանքը փրկելու և (կամ) գույքին պատճառվելիք վնասի չափը նվազեցնելու համար:

12.3.3.4 Ապահովագրական հատուցումն իրականացվում է այն չափով, որքանով դա նախատեսվում է վնասների հատուցման վերաբերյալ ապահովագրված տարածքի/երկրի օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն Պայմաններով նախատեսված սահմանաչափերը:

12.3.3.5 Ցանկացած դեպքում ապահովագրական ծածկույթը չի տարածվում Պայմանագրում/Վկայագրում սահմանված տարածքից դուրս տեղի ունեցած վնասի հատուցման պահանջի վրա:

12.3.3.6 Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի վերաբերյալ վեճերը բացակայում են, և տուժող կողմը իրավասու է ապահովագրական պատահարի հետևանքով հասցված վնասների սահմաններում հատուցում ստանալու, ապա ներկայացված պահանջները բավարարվում են, և ապահովագրական հատուցումն իրականացվում է արտադատական եղանակով: Այս դեպքում վնասի չափը և ապահովագրական հատուցման գումարը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ հասցված վնասի և դրա հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների (բժշկական հաստատություններ, բժշկական փորձագիտական մարմիններ,

սոցիալական ապահովության մարմիններ և այլն) կողմից տրված փաստաթղթերի, ինչպես նաև կատարված ծախսերը հավաստող վճարային հաշիվների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի հիման վրա: Անհրաժեշտության դեպքում վերոնշյալ փաստաթղթերի հիման վրա կազմվում է հատուցման վերաբերյալ համաձայնագիր, որը ստորագրվում է Ապահովագրողի, Ապահովադրի և տուժողի կողմից: Այս դեպքում, եթե տուժողը գտնվում է ՀՀ տարածքից դուրս, ապա Ապահովագրողի համաձայությամբ ընդունվում է նաև տուժողի ստորագրությունը էլեկտրոնային եղանակով:

12.3.3.7 Վեճերի առկայության դեպքում, ապահովագրական հատուցումն իրականացվում է դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի (արբիտրաժային դատարան) հիման վրա:

12.3.3.8 Ապահովագրողն իրավասու է սույն Պայմաններով սահմանված ապահովագրական պատահարների հետևանքով հասցված փաստացի վնասների որոշման համար հրավիրել անկախ փորձագետների և կրել վերջիններիս կողմից մատուցված ծառայությունների ծախսերը:

12.3.3.9 Ապահովագրական հատուցման ենթակա են.

12.3.3.9.1 Ֆիզիկական անձի առողջությանը վնաս պատճառվելու կամ մահվան դեպքում՝

ա)աշխատավարձը, որը տուժողը կորցրել է առողջական խեղման կամ այլ վնասի պատճառով՝ աշխատունակության կորստի կամ դրա նվազման հետևանքով,

բ) լրացուցիչ ծախսեր, որոնք անհրաժեշտ են առողջության վերականգնման համար (սնունդ, առողջարանային բուժում, կողմնակի խնամք, պրոթեզավորում, տրանսպորտային ծախսեր, ծախսեր՝ կապված վճարովի բժշկական ծառայության հետ, և այլն),

գ) եկամտի մի մասը, որից տուժածի մահվան դեպքում զրկվել են անաշխատունակ անձինք, որոնք գտնվել են նրա խնամակալության տակ կամ ունեցել են նրանից ապրուստի միջոցներ ստանալու իրավունք,

դ) հուղարկավորության ծախսեր,

ե)պատահարի հանգամանքների նախնական բացահայտման և Ապահովագրված անձի մեղավորության աստիճանի

պարզման նպատակով իրականացված ողջամիտ ծախսեր,

զ) դատական մարմիններում ենթադրյալ ապահովագրական պատահարի հետ կապված գործի վարման ծախսերը (փաստաբանի ծախս, պետական տուրք, փորձագետի ծախս և այլ դատական ծախսեր), որոնց վճարման պարտականությունն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դրվել է Ապահովագրված անձի վրա,

է)անհրաժեշտ և ողջամիտ ծախսեր՝ կապված ապահովագրական պատահարի հետևանքով տուժած անձանց կյանքը փրկելու կամ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի նվազեցման հետ:

12.3.3.9.2 Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային վնաս պատճառվելու դեպքում՝

ա)ուղղակի շուկայական վնասը՝ հասցված գույքի ամբողջական ոչնչացման կամ մասնակի վնասման հետևանքով, որը գույքի ամբողջական կորստի դեպքում որոշվում է նրա շուկայական արժեքի չափով՝ մասհանելով մաշվածությունը, մասնակի վնասվածքի դեպքում՝ անհրաժեշտ ծախսերի ծավալով, որն անհրաժեշտ է վերականգնել նախկին վիճակը, որում գույքը գտնվել է մինչև ապահովագրական պատահարը,

բ) պատահարի հանգամանքների և Ապահովագրված անձի մեղավորության աստիճանի նախնական պարզման նպատակով իրականացված ողջամիտ ծախսերը, եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է որպես ապահովագրական պատահար,

գ)դատական մարմիններում ենթադրյալ ապահովագրական պատահարի գործի ընթացքի հետ կապված ծախսերը, որոնց վճարման պարտականությունն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դրվել է Ապահովագրված անձի վրա (փաստաբանի ծախս, պետական տուրք, փորձագետի ծախս և այլ դատական ծախսեր), եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է ապահովագրական պատահար: Նշված ծախսերով սահմանվում է ենթասահմանաչափ, ոչ ավել քան սույն բաժնով Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի 10

(տասը) %-ի չափով կամ Կողմերի համաձայնությամբ այլ սահմանաչափ:

դ) ապահովագրական պատահարի հետևանքով տուժողների գույքը փրկելու կամ գույքին հասցված վնասները նվազեցնելու հետ կապված ողջամիտ և անհրաժեշտ ծախսերը:

12.3.3.10 Ապահովագրական հատուցումը կարող է վճարվել դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա կամ կողմերի համաձայնությամբ՝ արտադատական կարգով:

12.3.3.11 Ապահովագրական հատուցման (մերժման) որոշումը Ապահովագրողի կողմից կայացվում է ապահովագրական պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց և շահագրգիռ բոլոր անձանց հետ նրա վերջնական չափը համաձայնեցնելուց կամ վերջնական դատական ակտի (արբիտրաժային դատարան) օրինական ուժի մեջ մտնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.3.3.12 Ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է տուժած երրորդ անձին կամ Ապահովագրված անձին, եթե նա Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ կատարել է այդ վճարները երրորդ անձին՝ ապահովագրական հատուցման որոշման կայացման օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.3.3.13 Հատուցումը ենթակա է վճարման ՀՀ դրամով՝ վնասի օրվա դրությամբ սահմանված ՀՀ ԿԲ արտարժույթի փոխարժեքով: Տուժողի՝ ՀՀ ոչ ռեզիդենտ լինելու դեպքում հատուցումը վճարվում է արտարժույթով:

12.3.4 Կողմերի գործողություններն ապահովագրական պատահարի դեպքում

12.3.4.1 Ապահովագրված անձը պարտավոր է.

12.3.4.1.1 ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալու պահից անհապաղ հայտնել Աջակցող ընկերությանը, և ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ նաև Ապահովագրողին՝ Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարով կամ էլ. փոստի միջոցով, և համապատասխան լիազոր մարմիններին կապի հնարավոր միջոցներով,

12.3.4.1.2 ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ տուժած անձանց հասցված վնասները նվազեցնելու կամ կյանքը փրկելու համար,

12.3.4.1.3 Սույն Պայմանների 12.3.4.1 կետով սահմանված ժամկետներում Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի հետ կապված իրեն ներկայացված պահանջների մասին,

12.3.4.1.4 Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո 30 օրվա ընթացքում գրավոր ձևով Ապահովագրողին ներկայացնել հայտային դիմում:

12.3.4.2 Եթե Ապահովագրված անձը չկատարի սույն Պայմաններով սահմանված պարտականությունները, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

12.3.4.3 Ապահովագրողը պարտավոր է.

12.3.4.3.1 ապահովագրական պատահարի դեպքում իրականացնել հատուցում՝ հաշվի առնելով Պայմանագրում/Վկայագրում նշված սահմանաչափերն ու Պայմանները,

12.3.4.3.2 հատուցել ապահովագրական պատահարի ժամանակ ապահովագրության օբյեկտին հասցված վնասների նվազեցման կամ կանխարգելման նպատակով իրականացված ծախսերը,

12.3.4.3.3 Ապահովագրված անձի կողմից հայտային դիմում և ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում որոշել վնասի չափը և մերժման հիմքերի բացակայության դեպքում կազմել վթարային հավաստագիր կամ կայացնել ապահովագրական հատուցման որոշում,

12.3.4.3.4 ըստ անհրաժեշտության, Ապահովագրված անձի՝ ապահովագրական պատահարի հետ կապված շահերի պաշտպանության նպատակով, մինչդատական փուլում նշանակել փաստաբան կամ այլ լիազորված անձ, ընդ որում, Ապահովագրված անձը պարտավոր է այդպիսի

շահերի պաշտպանության համար Ապահովագրողի կողմից նշված անձանց տալ լիազորագրեր կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ, դատարանում կազմակերպել Ապահովագրված անձի շահերի պաշտպանությունը կամ այլ կերպ իրականացնել դրանց պաշտպանությունը՝ կապված ապահովագրական պատահարի հետ: Եթե Ապահովագրողը հրաժարվում է ներկայացնել Ապահովագրված անձի շահերը դատարանում, ապա նա պարտավոր է հատուցել այդպիսի գործընթացների համար Ապահովագրված անձի իրականացրած փաստաբանական ծախսերը: Այդպիսի ծախսերը հատուցվում են ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրողի պատասխանատվության սահմաններում:

12.3.5 Ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.3.5.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

12.3.5.1.1 փորձագետի կողմից կազմված եզրակացությունը՝ ապահովագրական պատահարի արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասի պատճառների և հնարավոր հետևանքների մասին, եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ պատահարի հետ կապված հանգամանքները հաստատվել են արտադատական կարգով,

12.3.5.1.2 օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որը պարունակում է տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի կողմից հատուցման ենթակա գումարի չափը, որը

ներառված է Ապահովագրողի պատասխանատվության ծավալի մեջ,

12.3.5.1.3 ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,

12.3.5.1.4 այլ առկա փաստաթղթեր, որոնք պարունակում են տվյալ ապահովագրական պատահարի մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն,

12.3.5.1.5 լիազորված մարմինների (բժշկական հաստատություններ, բժշկական փորձագիտական մարմիններ, սոցիալական ապահովության մարմիններ, ոստիկանություն և այլն) կողմից տրված փաստաթղթեր, որոնք ներառում են պատահարի պատճառները և վնասի չափը:

12.3.5.2 Եթե ապահովագրական հատուցումը Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ վճարվելու է Ապահովագրված անձին, ապա նա պարտավոր է ներկայացնել նաև իր կողմից տուժողին պատճառված վնասը հատուցելու մասին համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ վճարման անդորրագրերի բնօրինակները, որոնք չներկայացնելու դեպքում Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման:

12.3.6 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

12.3.6.1 Սույն Պայմաններով ենթակա չեն հատուցման հետևյալ դեպքերի և/կամ իրադարձությունների հետևանքով պատճառված վնասը՝

12.3.6.1.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ ցանկացած այլ անձի կողմից դիտավորությամբ հասցրած վնասի հատուցման պահանջը: Դիտավորությամբ հասցված վնաս ասելով՝ հասկացվում է համապատասխան անձի կողմից գիտակցաբար կատարված գործողություն կամ թույլ տրված անգործություն, որի հետևանքով տեղի է ունեցել ապահովագրական պատահար, կամ ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականությունը բավականին մեծացել է,

12.3.6.1.2 Ապահովագրված անձանց՝ միմյանց հանդեպ ներկայացված վնասի հատուցման այն պահանջները,

որոնց պատասխանատվություններն ապահովագրված են Ապահովագրողի կողմից,

12.3.6.1.3 ներկայացված ցանկացած վնասի հատուցման պահանջը, որը հասցվել է ռազմական գործողությունների, ազգային շարժումների, ապստամբությունների, մասսայական անկարգությունների, ահաբեկչական ակտերի հետևանքով,

12.3.6.1.4 ներկայացված այնպիսի վնասների հատուցման պահանջները, որոնք առաջացել են Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Ապահովագրողի հետ համաձայնեցրած ժամկետներում պատահարի այն հանգամանքների չվերացման հետևանքով, որոնք զգալիորեն բարձրացնում են ռիսկայնության աստիճանը, և որոնց վերացման համար, ընդունված նորմերին համապատասխան, Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրվել են ցուցումներ,

12.3.6.1.5 այն վնասները, որոնք առաջացել են ռադիոակտիվ վարակման, ճառագայթման և միջուկային վառելիքի օգտագործման հետևանքով, կամ որոնք առաջացել են Ապահովադրի կողմից օրենքի, որոշումների, տեղեկագրային և արտադրական կանոնների, նորմերի և նորմատիվային փաստաթղթերի խախտման հետևանքով,

12.3.6.1.6 Պայմանագրերի կամ Ապահովադրի (ապահովագրված անձի) հետ համաձայնեցված այլ ֆինանսական պարտավորությունների հետ կապված հատուցման պահանջները, ինչպես նաև վճարումները, որոնք կատարվում են որոշակի պարտավորությունների կատարման կամ պայմանագրերից բխող տույժերի փոխարեն,

12.3.6.1.7 երաշխիքների կամ նմանատիպ պարտավորությունների չկատարման հետևանքով պատճառված վնասները կամ երաշխիքային պայմանագրերից բխող պահանջները,

12.3.6.1.8 մտավոր սեփականության օբյեկտների, գյուտի կամ արտադրության օրինակների չթույլատրված

օգտագործման, հեղինակային իրավունքի, հայտնագործության իրավունքի, կամ նմանատիպ իրավունքների խախտման հետ կապված վնասների հատուցման պահանջներ, ներառյալ՝ գրանցված ֆիրմային և ապրանքային նշանների, դրանց տարրերի և անվանման չթույլատրված օգտագործումը,

12.3.6.1.9 բարոյական վնասների, այդ թվում՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասների հետ կապված պահանջները:

12.3.6.2 Հատուցման ենթակա չէ ստորև նշված պատասխանատվության հետ կապված գործողությունների հետևանքով պատճառված վնասը, մասնավորապես՝

12.3.6.2.1 ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը,

12.3.6.2.2 Ապահովագրված անձի մասնագիտական գործունեության հետ կապված պատասխանատվությունը,

12.3.6.2.3 Ապահովագրված անձի կողմից վարձով (վարձույթ, լիզինգ), գրավով կամ պատասխանատու պահպանման հանձնված իրերի և/կամ տրանսպորտային միջոցների վնասվելու, ոչնչացման կամ փչացման դեպքերում վնասների պատասխանատվության հետ:

12.3.7 Ապահովագրական հատուցման մերժման հիմքերը

12.3.7.1 Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովադրին (Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցում վճարել՝

12.3.7.1.1 Եթե ապահովագրական պատահարը Պայմանագրի/Վկայագրի Պայմանների գործողության ընթացքում տեղի է ունեցել Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ տուժած երրորդ անձի կողմից նպատակաուղղված գործողությունների կամ անգործության հետևանքով, որոնք նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն Ապահովադրի կամ այն անձի կողմից, ում օգտին կնքվել է ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,

12.3.7.1.2 Եթե ապահովագրական պատահարը Պայմանագրի/Վկայագրի Պայմանների գործողության ընթացքում տեղի է ունեցել Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձի կողմից կատարված դիտավորյալ հանցագործության հետևանքով, որն անմիջական կապի մեջ է ապահովագրական պատահարի հետ,

12.3.7.1.3 Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողին ապահովագրության օբյեկտի, ապահովագրական ռիսկի փոփոխությունների և վնասի ծավալի մասին սխալ տեղեկատվության հաղորդման, Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին հայտնելու ժամկետների խախտման կամ պատճառված վնասի փաստը և չափերը հաստատող փաստաթղթերի չներկայացման, Ապահովադրի/Ապահովագրված անձի նպատակաուղված և նրա համար հասանելի միջոցների չկիրառման դեպքում, որոնք պետք է ուղղված լինեն հասցված վնասի նվազեցմանը:

12.3.7.2 Ապահովագրական հատուցման մերժման մասին որոշումն Ապահովագրողը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ տուժողին հաղորդում է գրավոր տեսքով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ՝ այդ որոշումը կայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

12.3.7.3 Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման մերժման որոշումը կարող է Ապահովագրված անձի կամ տուժողի կողմից վիճարկվել դատական կարգով:

12.4 ԹՌԻՉՔԻ ՈՒՇԱՑՈՒՄ

12.4.1 Ապահովագրության օբյեկտ

12.4.1.1 Պայմաններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված ուղևորության ընթացքում հնարավոր չնախատեսված լրացուցիչ ծախսերի հետ, որոնք առաջացել են թռիչքի ուշացման հետևանքով:

12.4.1.2 Որպես լրացուցիչ ծախսեր՝ համարվում են սնունդի գնման, հյուրանոցի վարձակալության և այլ անհրաժեշտ ծառայություններից օգտվելու նպատակով կատարված ողջամիտ ծախսերը:

12.4.1.3 Ողջամիտ համարվում են այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են օդանավակայանում կամ այլ տրանսպորտային կայաններում ժամանակավոր մնալու ընթացքում նվազագույն կենցաղային հարցերը հոգալու համար: Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք կատարվել են լրացուցիչ հարմարություններ կամ ծառայություններ ձեռք բերելու նպատակով, այդ թվում՝ զվարճանքի կենտրոններ, թանգարաններ, կինոթատրոններ, ցուցահանդեսներ և այլ վայրեր այցելելը (նշված հաստատությունների մուտքի տոմսեր ձեռք բերելու և այդ վայրերը հասնելու համար կատարված տրանսպորտային ծախսերը), կամ ցանկացած այլ նպատակով մոտակա բնակավայր մեկնելու համար իրականացված ծախսերը:

12.4.2 Ապահովագրական պատահար

Ապահովագրական պահատար է համարվում ուղևորության շրջանակներում նախատեսված կանոնավոր միջազգային (ՀՀ-ից դեպի ապահովագրության տարածք և ապահովագրության տարածքի ներսում) կամ տեղային (միայն Ապահովագրության տարածքի ներսում) չվերթի 6 և ավել ժամով ուշացումը:

12.4.3 Ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.4.3.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում պարտավոր է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

12.4.3.1.1 Ապահովագրված անձի՝ հետաձգված չվերթի տոմսը,

12.4.3.1.2 Փոխադրողի կամ տրանսպորտային ընկերության կողմից տրված պաշտոնական եզրակացությունը (ստորագրված և կնքված), որով հաստատվում է չվերթի ուշացման փաստը՝ նշելով ուշացման պատճառը և տևողությունը, հետաձգման հետևանքով իր կողմից վճարված հատուցման չափը կամ այդ հատուցման մերժման փաստը,

12.4.3.1.3 թռիչքի ուշացման հետևանքով իր կողմից կատարված ողջամիտ ծախսերը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում՝ հյուրանոցում կամ ժամանակավոր կացության այլ վայրում մնալու ծախսերը՝ հաշիվ, վճարման անդորրագիր, ձեռք բերված սննդի և այլ ծառայություններից օգտվելու փաստը հավաստող վճարման կտրոնները՝ բնօրինակներով և դրանց պատշաճ ձևով կատարված թարգմանություններով:

12.4.4 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

12.4.4.1 Հատուցման ենթակա չէ այն վնասը (ծախսը), որը հետևանք է.

12.4.4.1.1 Ապահովագրված անձի՝ այդ չվերթի գրանցմանը ժամանակին չներկայանալու,

12.4.4.1.2 Պայմանագրի կնքման պահին և/կամ ուղևորության տոմսի ամրագրման պահին հայտարարված գործադուլի:

12.4.5 Ապահովագրական հատուցման վճարման կարգը

12.4.5.1 Թռիչքի ուշացման դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է՝

12.4.5.1.1 անհապաղ դիմել փոխադրող ընկերության գրասենյակ՝ պահանջելով տրամադրել թռիչքի ուշացման փաստը հաստատող փաստաթուղթ,

12.4.5.1.2 դիմել Ապահովագրողի զանգերի կենտրոն Վկայագրում նշված հեռախոսահամարով,

12.4.5.1.3 կատարել սույն Պայմանների 12.4.3 կետում նշված գործողությունները

12.4.5.2 Եթե Ապահովագրված անձը չվերթի հետաձգման արդյունքում ստացել է հատուցում նաև Փոխադրողի կողմից, ապա Ապահովագրողը վճարում է Ապահովագրված անձին սույն ծածկույթով նախատեսված և փոխադրողի կողմից վճարված հատուցման դրական տարբերությունը:

12.4.5.3 Եթե Ապահովագրված անձը Ապահովագրողից հատուցում ստանալուց հետո թռիչքի ուշացման համար հատուցում է ստացել նաև փոխադրողից, ապա նա պարտավոր է 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ամբողջությամբ վերադարձնել վճարված գումարները:

12.4.5.4 Ապահովագրողը Ապահովագրված անձի կողմից Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց

հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցման (մերժման) որոշում:

12.4.5.5 Ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարում է Պայմանների 12.4.5.4 կետում նշված որոշման կայացումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ապահովագրական հատուցման մերժման մասին որոշումն Ապահովագրողը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ տուժողին հաղորդում է գրավոր տեսքով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ՝ այդ որոշումը կայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

12.4.5.6 Հատուցումը ենթակա է վճարման Ապահովագրողի կողմից ՀՀ դրամով՝ վնասի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով:

12.5 ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԿԱՅԱՑՈՒՄԸ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

12.5.1 Ապահովագրական պահատար

Ապահովագրական պատահար է համարվում նախատեսված ուղևորության չկայացումը կամ ուղևորության վաղաժամկետ ընդհատումը, որը պայմանավորված է Ապահովագրված անձի (միայն ուղևորության չկայացման դեպքում) կամ վերջինիս ընտանիքի անդամներից որևէ մեկի (կին/ամուսին, երեխա, զավակ, ծնող, քույր կամ եղբայր) հրատապ հոսպիտալացմամբ կամ վերոնշյալ ընտանիքի անդամներից որևէ մեկի հանկարծամահությամբ՝ Ապահովագրված անձի մշտական բնակության երկրում:

12.5.2 Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսեր

Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի ուղևորության չկայացման կամ ուղևորությունից վաղաժամկետ վերադարձի հետևանքով կրած վնասը (նախապես վճարված ուղևորության տոմսերի վերադարձի կամ փոխարինման, հյուրանոցային համարների ամրագրումը չեղարկելու և այլն):

12.5.3 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

Հատուցման ենթակա չեն այն պատահարների հետևանքով առաջացած ծախսերը, որոնք ուղևորության տոմսերի ամրագրման ամսաթվից առաջ ախտորոշված հիվանդությունների և դրանց բարդությունների արդյունք են:

12.5.4 Ապահովագրական հատուցում, ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.5.4.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու ամսաթվից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Ապահովագրված անձը, իսկ վերջինիս մահվան դեպքում՝ նրա իրավահաջորդը, պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

12.5.4.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթեր՝ Ապահովագրված անձի կամ վերջինիս ընտանիքի անդամի էպիկրիզ, կամ Ապահովագրված անձի ընտանիքի անդամի մահվան վկայական, իսկ Ապահովագրված անձի ընտանիքի անդամի հրատապ հոսպիտալացման կամ մահվան պատճառով ուղևորության չկայացման դեպքում նաև Ապահովագրված անձի և իր ընտանիքի անդամի բարեկամական կապը հաստատող փաստաթղթեր,

12.5.4.3 չօգտագործված տոմսերը կամ դրանց վերադարձի արդյունքում առաջացած գնային տարբերությունը, ինչպես նաև ուղևորության չկայացման հետևանքով առաջացած վնասի այլ տեսակները հավաստող ֆինանսական փաստաթղթերը:

12.5.4.4 Ապահովագրողը Ապահովադրի (Ապահովագրված անձի), նրանց իրավահաջորդների կողմից Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցման (մերժման) որոշում:

12.5.4.5 Ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարում է 12.5.4.2 կետում նշված որոշման կայացումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ապահովագրական հատուցման մերժման մասին որոշումն Ապահովագրողը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ տուժողին հաղորդում է գրավոր տեսքով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ՝ այդ որոշումը կայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

12.6 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ

12.6.1 Ապահովագրության օբյեկտ

Պայմաններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված ուղևորության ընթացքում Ապահովագրված անձի փաստաթղթերի կորստի կամ վնասման հետ (անձնագիր, տոմսեր և այլն), որի պատճառով վերջինիս ուղևորությունը շարունակելը և/կամ իր մշտական բնակության վայր վերադառնալը դարձել է անհնար:

12.6.2 Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսեր

Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը հատուցում է կորած կամ վնասված փաստաթղթերի փոխարինման (վերականգնման) արժեքը՝ պայմանով, որ Ապահովագրված անձը այդ կորստի կամ վնասման հայտնաբերման պահից 24 ժամվա ընթացքում հայտնել է այդ մասին իր գտնվելու երկրի ոստիկանությանը և այդ երկրում վերջինիս մշտական բնակության երկրի հյուպատոսական ծառայություններին:

12.6.3 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից իր գույքը, որում գտնվել են փաստաթղթերը, կամ դրանք առանց հսկողության հասարակական տեղում թողնելու հետևանքով:

12.6.4 Ապահովագրական հատուցում, ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

12.6.4.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

12.6.4.1.1 փաստաթղթերի կորստի վերաբերյալ պատահարը տեղի ունենալու երկրի ոստիկանության կողմից տրված արձանագրությունը կամ այլ պաշտոնական փաստաթուղթ,

12.6.4.1.2 փաստաթղթերի կորստի վերաբերյալ հյուպատոսական ծառայությունների կողմից տրված հավաստագիր,

12.6.4.1.3 փաստաթղթերի փոխարինման (վերականգնման) համար կատարված վճարումները հավաստող ֆինանսական փաստաթղթերը:

12.6.4.2 Ապահովագրողը Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցման (մերժման) որոշում:

12.6.4.3 Ապահովագրողը ապահովագրական հատուցումը վճարում է 12.6.4.2 կետում նշված որոշման կայացումից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ապահովագրական հատուցման մերժման մասին որոշումն Ապահովագրողը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին և/կամ տուժողին հաղորդում է գրավոր տեսքով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ՝ այդ որոշումը կայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:

12.7 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

12.7.1 Ապահովագրության օբյեկտ

Սույն պայմաններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված ուղևորության ընթացքում հնարավոր իրավաբանական ծառայություններից օգտվելու ծախսերի հետ:

12.7.2 Ապահովագրական պահատար

Ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրության տարածքում փաստացի տեղի ունեցած իրադարձությունը, որի արդյունքում Ապահովագրված անձի մոտ ծագել է իրավաբանական օգնություն ստանալու հրատապություն՝ կապված երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին ոչ դիտավորյալ ձևով պատճառված վնասի հատուցման պահանջով Ապահովագրված անձին դատական կամ վարչական վարույթի կամ նախնական քննության մեջ ներգրավելու հետ:

12.7.3 Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսեր

12.7.3.1 Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է կազմակերպել

իրավաբանական օգնության տրամադրումը, որն իր մեջ ներառում է ստորև նշված դեպքերը, և հատուցել դրա հետ կապված հետևյալ ծախսերը՝

12.7.3.1.1 Ապահովագրված անձին հեռախոսով, էլեկտրոնային փոստով, փաստաբանի գրասենյակում՝ գրավոր կամ բանավոր կարգով տրամադրված իրավաբանական խորհրդատվության համար կատարված ծախսը,

12.7.3.1.2 Վարչական և դատական վարույթի (քաղաքացիական կամ քրեական գործերով, եթե Ապահովագրված անձը ներգրավված է որպես մեղադրյալ, կասկածյալ, ամբաստանյալ կամ տուժող) շրջանակներում, ինչպես նաև նախնական քննության փուլում (քրեական գործերով) Ապահովագրված անձի իրավաբանական պաշտպանության, այդ թվում՝ փաստաբանի և թարգմանչի մատուցած ծառայությունների հետ կապված ծախսերը,

12.7.3.1.3 փաստաբանի և թարգմանչի այցի հետ կապված ծախսերը, որն իրականացվում է՝ ըստ Ապահովագրված անձի գտնվելու երկրում գործող օրենսդրության:

12.7.3.2 Իրավաբանական օգնության որակի համար պատասխանատվություն է կրում այդ օգնությունը ցուցաբերած անձը:

12.7.4 Բացառություններ, չհատուցվող ծախսեր

12.7.4.1 Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնց անհրաժեշտությունն առաջացել է ստորև նշված դեպքերի հետևանքով իրավաբանական օգնություն տրամադրելու համար՝

12.7.4.1.1 Ապահովագրված անձի կողմից կանխամտածված ձևով (դիտավորությամբ) կատարված գործողությունները (բացառությամբ անհրաժեշտ պաշտպանության) կամ թույլ տրված անգործությունը,

12.7.4.1.2 Ապահովագրված անձի կողմից երրորդ անձի պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վիրավորանքը, արատավորող տեղեկություններ և/կամ զրպարտություն տարածելը, որոնց հետ կապված ապահովագրված անձի դեմ պահանջ է ներկայացվել,

12.7.4.1.3 Ապահովագրված անձին ահաբեկչական գործողություններում մասնակցության մեղադրանք առաջադրելը կամ որպես կասկածյալ ներգրավելը,

12.7.4.1.4 Ապահովագրված անձի կողմից ավտոտրանսպորտային միջոցների, երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտային միջոցների շահագործումը,

12.7.4.1.5 Ապահովագրված անձի սպառողական իրավունքների պաշտպանությունը:

12.7.5 Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրված անձի գործողությունները.

12.7.5.1 Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ (մեղադրանքը առաջադրելու պահից 24 ժամվա ընթացքում)՝

12.7.5.2 զանգահարել Աջակցող ընկերություն՝ Վկայագրում նշված հեռախոսահամարներից որևէ մեկով,

12.7.5.3 կատարել Աջակցող ընկերության աշխատակցի կողմից տրված բոլոր հրահանգները,

12.7.5.4 հետևել իրավաբանական օգնություն ցուցաբերող անձանց խորհուրդներին, անհրաժեշտության դեպքում՝ նրանց տալ համապատասխան լիազորագիր,

12.7.6 Պայմանների 12.7.5.1 կետի պահանջները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չհատուցել 12.7.3 կետով նախատեսված ծախսերը:

13 ԾՐԱԳԻՐ III. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ

13.1 Սույն ծրագրի դեպքում Պայմաններով նախատեսվում է ծածկույթ Ամբողջ աշխարհ Ստանդարտ ծրագրով՝ 30,000 Եվրո ապահովագրական գումարի չափով:

13.2 Սույն ծրագրի ներքո Ապահովադրի կողմից ձեռք բերված Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական ծածկույթը գործում է Ապահովագրված անձի՝ անսահմանափակ քանակությամբ ուղևորությունների դեպքում:

13.3 Սույն ծրագրի շրջանակներում Պայմանագրի/Վկայագրի գործողության սկզբի և ավարտի միջև սահմանվում է ապահովագրության գործողության օրերի ընդհանուր առավելագույն քանակը՝ համաձայն ստորև նշված աղյուսակի.

Պայմանագրի գործողության ժամկետ	**Ապահովագված օրերի քանակ**
12 ամիս	90 օր
12 ամիս	60 օր
12 ամիս	30 օր
30 օր	8 օր

14 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1 Ապահովադիրն իրավունք ունի՝

14.1.1 սույն Պայմաններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում,

14.1.2 վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը/Վկայագիրը սույն Պայմաններով սահմանված կարգով,

14.1.3 Պայմանագրի կորստի, ոչնչացման դեպքում ստանալ վերջինիս կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ «Բնօրինակի հետ նույնն է» մակագրությամբ,

14.1.4 իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների դեպքում դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է:

14.2 Ապահովադիրը պարտավոր է՝

14.2.1 վճարել ապահովագրավճարը Պայմանագրում/Վկայագրում նշված ժամկետներում և կարգով,

14.2.2 Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող և իրեն հայտնի հավաստի տեղեկատվություն,

14.2.3 ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում անհապաղ, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես հեռախոսով կամ տեղեկացման փաստը հավաստող

այլ ճանապարհով պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին և/կամ Աջակցող ընկերությանը և հայտնել պատահարի մանրամասները՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կոնտակտային հեռախոսահամարով՝ բժշկական, բժշկա-տրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով,

14.2.4 պատշաճ կերպով կատարել Պայմանագրով/Վկայագրով ստանձնած իր պարտականությունները,

14.2.5 Ապահովագրողին անհապաղ հայտնել Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են ապահովագրության օբյեկտի ռիսկայնությունը,

14.2.6 Ապահովագրված անձին ծանոթացնել սույն Պայմանների դրույթների հետ: Նշված պարտավորությունը չկատարելու դեպքում դրա հետևանքների ռիսկը կրում է Ապահովադիրը:

14.2.7 Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողին պահանջի փոխանցման (սուբրոգացիայի) իրավունքը կիրառելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցման կիրառումից, կամ այդ իրավունքը կիրառելն անհնարին է դարձել Ապահովադրի մեղքով, ապա Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից և իրավունք ունի պահանջելու վերադարձնել արդեն իսկ վճարված հատուցված գումարը:

14.3 **Ապահովագրված անձը պարտավոր է՝**

14.3.1 ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ապահովագրական պատահարի առաջացումը կանխելու կամ առաջանալու դեպքում հետևանքները մեղմացնելու համար,

14.3.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում անհապաղ, իսկ անհնարինության դեպքում՝ նման հնարավորության առաջացումից հետո անմիջապես հեռախոսով կամ տեղեկացման փաստը հավաստող այլ ճանապարհով պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին և/կամ Աջակցող ընկերությանը և հայտնել պատահարի մանրամասները՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կոնտակտային հեռախոսահամարով՝ բժշկական, բժշկատրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով,

14.3.3 հետևել բուժհաստատության և բժշկի (և/կամ Աջակցող ընկերության) կողմից տրված կարգադրություններին,

14.3.4 անձամբ վճարել մատուցված ծառայությունների դիմաց, եթե առկա է Աջակցող ընկերության և/կամ Ապահովագրողի համաձայնությունը կանխիկ դրամական միջոցներով վճարում իրականացնելու վերաբերյալ՝ դրանք հետագայում Ապահովագրողի կողմից փոխհատուցելու պայմանով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմաններով:

14.3.5 պահպանել հատուցման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (Պայմանագրի/Վկայագրի իր օրինակը, անձնական փաստաթղթերը, ծառայությունների վճարման հաշիվներն ու կտրոնները), չփոխանցել դրանք երրորդ անձանց՝ վերջիններիս կողմից բժշկական օգնություն ստանալու նպատակով,

14.3.6 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում մեկից ավելի ուղևորությունների դեպքում յուրաքանչյուր ուղևորությունից առաջ 3 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնել Ապահովագրողին հերթական ուղևորության մասին՝ զանգահարելով Ապահովագրողի շուրջօրյա հեռախոսահամարով:

14.4 Ապահովագրողն իրավունք ունի՝

14.4.1 ստուգել Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից տրամադրված տեղեկությունների և տվյալների արժանահավատությունը իրեն հասանելի ցանկացած միջոցներով, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը,

14.4.2 Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների չկատարման դեպքում լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ վերջինիս տեղյակ պահելով Պայմանագրի/Վկայագրի լուծման պատճառների մասին, ընդ որում Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ,

14.4.3 մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը/Ապահովագրված անձը խախտել է կամ չի կատարել Պայմանագրով/Վկայագրով կամ սույն Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները,

14.4.4 մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովադիրը նախօրոք հայտնել է կեղծ տեղեկություններ Ապահովագրված անձի մասին, ներկայացրել է կեղծ ապացույցներ ապահովագրական դեպքի տեղի ունենալու մասով, Ապահովագրողին է ներկայացրել ՀՀ օրենսդրության

կամ այն երկրի օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր, որտեղ ժամանակավորապես գտնվել է,

14.4.5 Պայմանագրին/Վկայագրին կից հավելվածներ կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում հաշվարկված գումարի չափով,

14.4.6 Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի խախտման դեպքում միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին սույն Պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին և Ապահովագրված անձին,

14.4.7 Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացնելուց հետո Ապահովադրից պահանջել փոփոխելու Պայմանագրի/Վկայագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար,

14.4.8 ապահովագրական պատահարների հետ կապված տեղեկությունների վերաբերյալ հարցումներ անել իրավասու մարմիններին, բժշկական և այլ կազմակերպություններին ու հաստատություններին, որոնք տիրապետում են ապահովագրական պատահարի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները,

14.4.9 հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը մինչև ապահովագրական պատահարի մասին անհրաժեշտ տեղեկատվության և հաստատող փաստաթղթերի ստացումը,

14.4.10 հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովագրված անձի նկատմամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու առնչությամբ հարուցվել է քրեական գործ,

14.4.11 միակողմանի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ ապահովագրավճարը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու դեպքում,

14.4.12 իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

14.5 Ապահովագրողը պարտավոր է՝

14.5.1 Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության Պայմաններին,

14.5.2 Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների օրինակ տրամադրել Ապահովադրին,

14.5.3 չբացահայտել տեղեկություններ Ապահովադրի և Ապահովագրված անձանց մասին, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ,

14.5.4 սահմանված կարգով կատարել Պայմանագրի/Վկայագրի համաձայն ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցման վճարում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և սույն Պայմաններով նախատեսված կարգով,

14.5.5 պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո, պարզել դրանց հավաստիությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն՝ Պայմաններով կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով,

14.5.6 իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

15 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

15.1 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում կողմերը կարող են երկկողմանի համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել և (կամ) լրացնել Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների դրույթները, որը հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Այդ փոփոխությունները գերակա են Պայմանների նկատմամբ:

15.2 Պայմանագրից/Վկայագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում/Վկայագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.3 Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

15.4 Սույն Պայմանները կազմված են երկու լեզվով (հայերեն և անգլերեն), որոնց միջև հակասությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվով տարբերակին:

15.5 Սույն Պայմանների ԿՈՄՖՈՐՏ Ծրագրով նախատեսված մեկ կամ մի քանի ռիսկերը Պայմանագրում/Վկայագրում կարող են նշվել բացառապես ՍՏԱՆԴԱՐՏ Ծրագրի հետ միասին: